

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Գործընկերության և համագործակցության մասին մի կողմից՝  
Հայաստանի Հանրապետության և մյուս կողմից՝ Եվրոպական  
համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև

Հայաստանի Հանրապետությունը՝ մի կողմից և «Եվրոպական  
համայնք հիմնելու մասին» Պայմանագրի, «Աժխի և պողպատի  
Եվրոպական համագործակցություն հիմնելու մասին» Պայմանագրի,  
«Ատոմային էներգիայի Եվրոպական համագործակցություն հիմնելու»  
մասին Պայմանագրի Պայմանավորվող կողմերը՝ Բելգիայի  
Թագավորությունը, Դանիայի Թագավորությունը, Գերմանիայի  
Դաշնային Հանրապետությունը, Հունաստանի Հանրապետությունը,  
Իսպանիայի Թագավորությունը, Ֆրանսիայի Հանրապետությունը,  
Իռլանդիան, Իտալիայի Հանրապետությունը, Լյուքսեմբուրգի Մեծ  
Դքսությունը, Նիդերլանդների Թագավորությունը, Ավստրիայի  
Հանրապետությունը, Պորտուգալիայի Հանրապետությունը,  
Ֆինլանդիայի Հանրապետությունը, Շվեդիայի Թագավորությունը,  
Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ  
Թագավորությունը, այսուհետ՝ Անդամ պետություններ, և  
Եվրոպական համայնքը, Աժխի և պողպատի Եվրոպական  
համագործակցությունը և Ատոմային էներգիայի Եվրոպական  
համագործակցությունը, այսուհետ՝ Համայնք, մյուս կողմից,

նկատի ունենալով կապերը Հայաստանի Հանրապետության և  
Համայնքի ու Անդամ պետությունների միջև և այն ընդհանուր  
արժեքները, որ նրանք կհստմ են,

ընդունելով, որ Հայաստանի Հանրապետությունը և Համայնքը  
ցանկանում են ուժեղացնել այդ կապերը և հաստատել  
գործընկերություն և համագործակցություն, ինչը կամրապնդի և  
կընդլայնի նախկինում, մասնավորապես, Եվրոպական տնտեսական  
համագործակցության, Ատոմային էներգիայի գծով Եվրոպական  
համագործակցության և Խորհրդային Սոցիալիստական  
Հանրապետությունների Միության միջև 1989 թվականի դեկտեմբերի  
18-ին ստորագրված «Առևտրի և կոմերցիոն ու տնտեսական  
համագործակցության մասին» Համաձայնագրով հաստատված  
հարաբերությունները,

նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության ու  
Համայնքի և դրա Անդամ պետությունների պարտավորությունը՝  
ամրապնդել գործընկերության հիմք կազմող քաղաքական և  
տնտեսական ազատությունները,

նկատի ունենալով Կողմերի պարտավորությունը՝ նպաստել  
միջազգային խաղաղությանն ու անվտանգությանը, ինչպես նաև  
վեճերի խաղաղ ձանապարհով լուծմանը, և այդպիսով

համագործակցել Միավորված ազգերի և Եվրոպայում անվտանգության ու համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) շրջանակներում,

նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության և Համայնքի, դրա Անդամ պետությունների կայուն պարտավորությունը՝ լիովին կատարել Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդի (ԵԱՀԽ) Եզրափակիչ ակտում, Մադրիդի և Վիեննայի՝ միմյանց հաջորդող հանդիպումների Եզրափակիչ փաստաթղթերում, ԵԱՀԽ-ի Բոննում կայացած Տնտեսական համագործակցության կոնֆերանսի փաստաթղթում, Նոր Եվրոպայի համար Փարիզի խարտիայում, ԵԱՀԽ-ի 1992 թվականի Հելսինկիի «Փոփոխության արձագանքները» փաստաթղթում և ԵԱՀԿ-ի այլ հիմնարար փաստաթղթերում նշված բոլոր սկզբունքներն ու դրույթները,

ընդունելով այդ համատեքստում, որ օժանդակումը Հայաստանի Հանրապետության անկախությանը, ինքիշխանությանը և տարածքային ամբողջականությանը կնպաստի Եվրոպայում խաղաղության և կայունության ապահովմանը,

հավաստելով օրինականության և մարդու, մասնավորապես՝ փոքրամասնությունների իրավունքների հարգման, ազատ և ժողովրդավարական ընտրություններով բազմակուսակցական համակարգի հիմնման և շուկայական տնտեսության զարգացման նպատակով տնտեսության ազատականացման առաջնակարգ կարևորությունը,

հավատալով, որ Գործընկերության և համագործակցության սույն Համաձայնագրի համակողմանի իրագործումը պայմանավորված է երկուստեք և կնպաստի Հայաստանի Հանրապետությունում քաղաքական, տնտեսական և իրավական բարեփոխումների գործընթացին և ավարտին, ինչպես նաև ԵԱՀԽ-ի Բոննի կոնֆերանսի որոշումների լույսի ներքո նշված համագործակցության համար անհրաժեշտ գործոնների նորամուծությանը,

ձգտելով խրախուսել սույն Համաձայնագրում ընդգրկված տարածքներում տարածաշրջանային համագործակցության գործընթացը հարևան երկրների հետ՝ ի նպաստ տվյալ տարածաշրջանի բարգավաճման ու կայունության, և, մասնավորապես, Անդրկովկասյան տարածաշրջանի անկախ պետությունների և այլ հարևան պետությունների միջև համագործակցության և փոխադարձ վստահության ամրապնդմանն ուղղված նախաձեռնությունները,

ձգտելով հաստատել և զարգացնել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող երկկողմանի, տարածաշրջանային և միջազգային հարցերով կանոնանվոր քաղաքական երկխոսություն,

ընդունելով և աջակցելով Հայաստանի Հանրապետության ցանկությանը՝ հաստատել սերտ համագործակցություն Եվրոպական հաստատությունների հետ,

նկատի ունենալով Հայաստանի Հանրապետությունում, ներառյալ էներգետիկ ոլորտում, ներդրումների խրախուսման անհրաժեշտությունը, և այս առումով՝ Համայնքի և դրա Անդամ պետությունների և Հայաստանի Հանրապետության միացումը Եվրոպական էներգետիկ խարտիային և էներգետիկ խարտիայի պայմանագրի ու էներգետիկ խարտիայի էներգիայի արդյունավետությանն և շրջակա մկջավայրի պահպանությանն առնչվող ասպեկտների մասին Արձանագրության լիարժեք կատարումը,

հաշվի առնելով Համայնքի պատրաստակամությունը տնտեսական համագործակցության և տեխնիկական օգնության համար միջոցներ հատկացնելու հարցում,

գիտակցելով Համաձայնագրի դրական դերը՝ ի նպաստ Հայաստանի Հանրապետության և Եվրոպայում ու դրա հարևան տարածաշրջաններում համագործակցության լայն շրջանների միջև բարիդրացիական հարաբերությունների աստիճանական վերականգնմանը և բաց միջազգային համակարգում Հայաստանի աճող ինտեգրացմանը,

ընդունելով Կողմերի պարտավորությունը՝ ազատականացնել առևտուրը՝ այն համապատասխանեցնելով Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կանոններին,

գիտակցելով գործարարության և ներդրումների, ինչպես նաև, այնպիսի ոլորտների վրա ներգործող պայմանների բարելավման անհրաժեշտությունը, ինչպիսիք են ընկերությունների հիմնումը, աշխատանքը, ծառայությունների մատուցումը և կապիտալի շարժը,

ողջունելով և ճանաչելով Հայաստանի Հանրապետության կատարած ջանքերը իր տնտեսությանը՝ կենտրոնացված պլանային տնտեսությամբ պետական առևտրի երկրից շուկայական տնտեսության անցնելու գործում,

հավաստելով, որ սույն Համաձայնագիրը նոր մթնոլորտ կստեղծի Կողմերի միջև տնտեսական հարաբերությունների համար, մասնավորապես, առևտրի և ներդրումների զարգացման համար, որոնք էական նշանակություն ունեն տնտեսության վերակառուցման և տեխնոլոգիայի արդիականացման գործում,

ձգտելով հաստատել սերտ համագործակցություն շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում՝ հաշվի առնելով այդ ոլորտում Կողմերի միջև գոյություն ունեցող փոխկախվածությունը,

ընդունելով, որ անօրինական ներգաղթը կանխելու և վերահսկելու ոլորտում համագործակցությունը սույն Համաձայնագրի գլխավոր նպատակներից է,

ծտելով հաստատել մշակութային համագործակցություն և բարելավել տեղեկատվության հոսքը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1

Սույնով գործընկերություն է հաստատվում մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության և մյուս կողմից՝ Համայնքի և դրա Անդամ պետությունների միջև: Այս գործընկերության նպատակներն են՝

- ապահովել համապատասխան հիմք Կողմերի միջև քաղաքական երկխոսության համար՝ նպատակ ունենալով քաղաքական կապերի զարգացումը,

- աջակցել Հայաստանի Հանրապետության ջանքերին՝ ամրապնդելու իր ժողովրդավարությունը, զարգացնելու տնտեսությունը և ավարտելու անցումը շուկայական տնտեսության,

- նպաստել Կողմերի միջև առևտրին, ներդրումներին և ներդաշնակ տնտեսական կապերին և այդպիսով խթանել դրանց կայուն տնտեսական զարգացումը,

- հիմք ապահովել օրենսդրական, տնտեսական, սոցիալական, ֆինանսական, գիտական, տեխնոլոգիական և մշակութային համագործակցության համար:

### Բաժին 1

#### Ընդհանուր սկզբունքներ

### Հոդված 2

Ժողովրդավարության, միջազգային իրավունքի սկզբունքների և մարդու իրավունքների, ինչպես սահմանված է, մասնավորապես, Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության մեջ, Հելսինկիի Եզրափակիչ ակտում և Նոր Եվրոպայի համար Փարիզի խարտիայում, ինչպես նաև շուկայական տնտեսության սկզբունքների հարգումը, ներառյալ ԵԱՀԽ-ի Բոննի խորհրդակցության փաստաթղթերում շարադրվածները, ընկած է Կողմերի արտաքին և ներքին քաղաքականությունների հիմքում և կազմում է գործընկերության և սույն Համաձայնագրի հիմնական բաղադրիչը:

### Հոդված 3

Կողմերը ընդունում են, որ իրենց ապագա բարգավաճման և կայունության համար կարևոր է, որ Խորհրդային Սոցիալիստական

Հանրապետությունների Միության փլուզման հետևանքով առաջացած նորանկախ պետությունները, այսուհետ՝ Անկախ պետություններ, պահպանեն և զարգացնեն համագործակցությունը միմյանց միջև Հելսինկիի Եզրափակիչ ակտի սկզբունքների և միջազգային իրավունքի համաձայն ու բարիդրացիության հարաբերությունների ոգով և ներդնեն բոլոր ջանքերը՝ այս գործընթացին աջակցելու ուղղությամբ:

#### Հոդված 4

Կողմերը պատշաճորեն կքննարկեն Հայաստանի Հանրապետությունում հանգամանքների փոփոխությունը, ինչը, մասնավորապես, վերաբերում է տնտեսական պայմաններին և շուկայական կողմնորոշման տնտեսական բարեփոխումների իրագործմանը: Այդ հանգամանքներից ելնելով՝ Համագործակցության խորհուրդը կարող է սույն Համաձայնագրի ցանկացած մասի փոփոխման առնչությամբ հանձնարարականներ տալ Կողմերին:

#### Բաժին 2

#### Քաղաքական երկխոսություն

#### Հոդված 5

Կողմերի միջև կհաստատվի կանոնավոր քաղաքական երկխոսություն, որ նրանք մտադիր են զարգացնել և հաճախակի դարձնել: Այն կուղեկցի և կամրապնդի Հայաստանի Հանրապետության և Համայնքի միջև մերձեցումը, կաջակցի Հայաստանում կատարվող քաղաքական ու տնտեսական փոփոխություններին և կնպաստի Համայնքի նոր ձևերի հաստատմանը: Քաղաքական երկխոսությունը.

- կամրապնդի Հայաստանի Հանրապետության կապերը Համայնքի և դրա Անդամ պետությունների և, հետևաբար, ժողովրդավարական ազգերի ողջ հանրության հետ: Սույն Համաձայնագրի միջոցով ձեռք բերված տնտեսական մերձեցումը կառաջնորդի դեպի ավելի սերտ քաղաքական կապերի հաստատման,

- կնպաստի Անդրկովկասի անկախ պետությունների հետագա զարգացմանն ու փոխադարձ հետքորթություն ներկայացնող միջազգային հարցերում դիրքորոշումների համընկմանը և, դրանով իսկ, այդ տարածաշրջանում անվտանգության ու կայունության աճին,

- կնախատեսի, որ Կողմերը ջանքեր գործադրեն՝ համագործակցելու Եվրոպայում կայունության և անվտանգության ամրապնդման, ժողովրդավարության սկզբունքների իրագործման,

մարդու, մասնավորապես փոքրամանությունների իրավունքների հարգման և պաշտպանության վերաբերյալ հարցերում, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, կխորհրդակցեն առնչվող հարցերի շուրջ:

Նման երկխոսությունը տեղի կունենա տարածաշրջանային հիմքով՝ նպատակ ունենալով նպաստել տարածաշրջանային վեճերի լուծմանը և լարվածության թուլացմանը:

#### Հոդված 6

Քաղաքական երկխոսությունը նախարարների մակարդակով տեղի կունենա Համագործակցության խորհրդի շրջանակներում՝ համաձայն 78-րդ հոդվածի և, փոխադարձ համաձայնությամբ, այլ դեպքերում:

#### Հոդված 7

Քաղաքական երկխոսության համար Կողմերը կարող են առաջ քաշել այլ գործընթացներ և մեխանիզմներ, մասնավորապես, հետևյալ ձևերով.

- պաշտոնական բարձր մակարդակի կանոնավոր հանդիպումներ մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների և մյուս կողմից՝ Համայնքի ու դրա Անդամ պետությունների ներկայացուցիչների միջև,

- լիովին օգտագործելով Կողմերի միջև դիվանագիտական ուղիների բոլոր հնարավորությունները, ներառյալ՝ համապատասխան կապերը երկկողմ, ինչպես նաև բազմակողմ ասպարեզներում, ինչպիսիք են օրինակ՝ Միավորված ազգերի, ԵՀԱԿ-ի և այլ հանդիպումները,

- ցանկացած այլ ձևով, ներառյալ փորձագիտական հանդիպումների հնարավորությունը, ինչը կնպաստի այդ երկխոսության ամրապնդմանը և զարգացմանը:

#### Հոդված 8

Խորհրդարանական մակարդակով քաղաքական երկխոսությունը տեղի կունենա 83-րդ հոդվածում ամրագրված Խորհրդարանական համագործակցության հանձնաժողովի շրջանակներում:

#### Բաժին 3

#### Ապրանքների առևտուր

## Հոդված 9

1. Կողմերը միմյանց կտրամադրեն առավել բարենպաստ ազգի ռեժիմ բոլոր բնագավառներում՝ կապված.

- արտահանումների և ներմուծման վրա տարածվող մաքսատուրքերի և գանձումների հետ, ներառյալ այդպիսի տուրքերի և գանձումների հավաքման մեթոդը,

- մաքսային ստուգումների, տարանցման, ապրանքային պահեստների և վերաբեռնումների վերաբերյալ դրույթների հետ,

- ներկրվող ապրանքների վրա ուղղակի կամ անուղղակի հարկերի և որևէ այլ տեսակի ներքին գանձումների հետ,

- վճարման մեթոդների և այդպիսի վճարումների փոխանցման հետ,

- ներքին շուկայում ապրանքների վաճառքի, գնման, փոխադրման, բաշխման և օգտագործման վերաբերյալ կանոնների հետ:

2. Առաջին կետի դրույթները չեն տարածվում.

ա) այն առավելությունների վրա, որոնք տրվում են մաքսային միություն կամ ազատ առևտրի գոտի ստեղծելու նպատակով կամ այդպիսի միության կամ գոտու ստեղծման հետևանքով,

բ) այն առավելությունների վրա, որոնք տրվում են որոշակի երկրներին ԱՀԿ-ի կանոնների և այլ միջազգային պայմանավորվածությունների համաձայն՝ ի նպաստ այդ երկրների զարգացման,

գ) այն առավելությունների վրա, որոնք տրվում են հարևան երկրներին՝ սահմանամերձ առևտուրը հեշտացնելու նպատակով:

3. Առաջին կետի դրույթները չեն տարածվի առաջին Հավելվածում նշված այն առավելությունների վրա, որոնք Հայաստանի Հանրապետության կողմից տրվում են ԽՍՀՄ փլուզման հետևանքով առաջացած այլ պետություններին, մինչև Հայաստանի Հանրապետության ԱՀԿ-ին անդամակցելու ժամանակաշրջանի ավարտը կամ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը (որը ավելի վաղ կլինի):

## Հոդված 10

1. Կողմերը համաձայնում են, որ ազատ տարանցման սկզբունքը սույն Համաձայնագրի նպատակների իրականացման համար կարևոր պայման է:

Այս կապակցությամբ յուրաքննաչուր Կողմ կապահովի մյուս Կողմի մաքսային տարածքում ծագող կամ մյուս Կողմի մաքսային տարածքի համար նախատեսված ապրանքների անարգել տարանցումը իր տարածքի վրայով կամ իր տարածքով:

2. ԱՍԳՀ-ի 5-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նշված կանոնները կիրառվում են երկու Կողմերի միջև:

3. Սույն հոդվածում նշված կանոնները առանց նախապայմանի վերաբերում են որևէ հատուկ կանոնների կապված առանձնահատուկ ոլորտների, ինչպիսիք են, մասնավորապես, տրանսպորտը կամ ապրանքները, որոնք համաձայնեցված են Կողմերի միջև:

#### Հոդված 11

Առանց հակասելու Ապրանքների ժամանակավոր ընդունման մասին միջազգային կոնվենցիաներից բխող երկու Կողմերի իրավունքներին ու պարտականություններին, յուրաքանչյուր Կողմ, դրանից բացի, մյուս Կողմին կազատի այն գանձումներից կամ տուրքերից, որոնք առնչվում են ապրանքների ժամանակավոր ընդունմանը՝ այս հարցի վերաբերյալ որևէ այլ միջազգային կոնվենցիայի շրջանակներում և դրանով սահմանված գործընթացների համաձայն՝ իր օրենսդրությանը համապատասխան: Հաշվի կառնվեն այն պայմանները, որոնցով Կողմը ստանձնում է այդպիսի կոնվենցիայից բխող պարտավորությունները տվյալ հարցի շուրջ:

#### Հոդված 12

1. Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ապրանքները կներկրվեն Համայնք առանց քանակական սահմանափակումների՝ չհակասելով սույն Համաձայնագրի 14-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածների դրույթներին:

2. Համայնքում արտադրվող ապրանքները կներկրվեն Հայաստանի Հանրապետություն առանց որևէ տեսակի քանակական սահմանափակման և համարժեք ազդեցության միջոցի:

#### Հոդված 13

Կողմերի միջև ապրանքների վաճառքը կկատարվի շուկայական գներով:

#### Հոդված 14

1. Եթե որևէ ապրանք ներկրվում է Կողմերից մեկի տարածք այնպիսի մեծ քանակությամբ կամ այնպիսի պայմաններով, որոնք վնաս են հասցնում կամ սպառնում են վնասել նման կամ ուղղակիորեն դրա հետ մրցակցող ապրանքների տեղական արտադրողներին, ապա Հայաստանի Հանրապետությունը կամ



Համայնքը նման դեպքում կարող են ձեռնարկել համապատասխան միջոցառումներ՝ հետևյալ գործընթացներին և պայմաններին համապատասխան:

2. Նախքան որևէ միջոց ձեռնարկելը, իսկ այն դեպքում, երբ կիրառվում է 4-րդ կետը՝ անհապաղ, Հայաստանի Հանրապետությունը կամ Համայնքը /ինչպես որ դեպքը կլինի/ հնարավորին չափ արագ Համագործակցության խորհրդին կտրամադրի ամբողջ առնչվող տեղեկությունը՝ երկու Կողմերի համար ընդունելի լուծում փնտրելու նպատակով, ինչպես նախատեսված է 11-րդ բաժնում:

3. Եթե խորհրդակցությունների արդյունքում Կողմերը համաձայնության չեն գալիս Համագործակցության խորհրդին իրադրությունը հարթելու ուղղությամբ գործողությունների հարցով դիմելուց հետո 30 օրվա ընթացքում, ապա խորհրդակցություններ խնդրած Կողմը կարող է ազատորեն սահմանափակել տվյալ ապրանքների ներկրումը այն չափով և ժամկետով, որքանով անհրաժեշտ է վնասը կանխելու կամ չեզոքացնելու համար, կամ ձեռնարկել այլ համապատասխան միջոցներ:

4. Ծայրահեղ հանգամանքներում, երբ հապաղումը կարող է դառնալ անվերականգնելի վնասի պատճառ, Կողմերը կարող են միջոցներ ձեռնարկել մինչև խորհրդակցություններ սկսելը՝ այն պայմանով, որ այդ խորհրդակցությունները սկսվեն անմիջապես նման գործողությունից հետո:

5. Սույն հոդվածի համաձայն միջոցներ ընտրելիս Կողմերը առաջնայնությունը կտան այն միջոցներին, որոնք ամենաքիչն են խոչընդոտում սույն Համաձայնագրի նպատակներին հասնելուն:

6. Սույն հոդվածում ոչինչ չպետք է հակասի կամ այլ կերպ ներազդի, որ յուրաքանչյուր Կողմ ձեռնարկի հակադեմպինգային կամ հակազդող միջոցներ՝ համաձայն ԱՍԳՀ-ի 6-րդ հոդվածի, ԱՍԳՀ-ի 6-րդ հոդվածի կիրարկման մասին Համաձայնագրի, ԱՍԳՀ-ի 6-րդ, 16-րդ և 23-րդ հոդվածների մեկնաբանման և կիրառման մասին Համաձայնագրի կամ համապատասխան ներքին օրենսդրության:

## Հոդված 15

Կողմերը պարտավորվում են փոփոխել սույն Համաձայնագրի դրույթները՝ միմյանց միջև ապրանքների առևտրի մասին, ելնելով հանգամանքների փոփոխությունից, ներառյալ Հայաստանի Հանրապետությունը ԱՀԿ-ին ադամակցելու հետևանքով առաջացած իրադրությունը: Համագործակցության խորհուրդը կարող է Կողմերին տալ հանձնարարականներ այդպիսի փոփոխությունների վերաբերյալ, որոնք ընդունվելու դեպքում կարող են գործել Կողմերի

միջև համաձայնագրի ուժով՝ համաձայն իրենց համապատասխան գործընթացների:

#### Հոդված 16

Սույն Համաձայնագիրը չպետք է բացառի արտահանումների, ներկրումների կամ ապրանքների տարանցման արգելումը կամ սահմանափակումները, որն արադարացվում է՝ ելնելով հասարակական բարոյականության, սոցիալական քաղաքականության կամ սոցիալական ապահովագրության, մարդկանց առողջության ու կյանքի, կենդանիների և բույսերի պաշտպանության, բնական պաշարների պաշտպանության, գեղարվեստի, պատմական և հնագիտական արժեքների, ազգային հարստության պահպանման կամ մտավոր, արդյունաբերական և առևտրային սեփականության կամ ոսկուն և արծաթին վերաբերող նորմերի պաշտպանության տեսանկյունից: Այդպիսի արգելքները կամ սահմանափակումները, այնուամենայնիվ, չպետք է լինեն Կողմերի միջև առևտրում ինքնակամ խտրականության կամ քողարկված սահմանափակումների միջոց:

#### Հոդված 17

Սույն բաժինը չպետք է տարածվի Համակցված անվանացանկի 50-60-րդ գլուխներում հիշատակված տեքստիլ արտադրանքի առևտրի վրա: Այդ ապրանքների առևտուրը կկարգավորվի առանձին համաձայնագրով, որը նախաստորագրվել է 1996 թվականի հունվարի 18-ին և պայմանականորեն գործում է սկսած 1996 թվականի հունվարի 1-ից:

#### Հոդված 18

1. Ածխի և պողպատի Եվրոպական համագործակցության ստեղծման վերաբերյալ Պայմանագրի գործողության տակ ընկնող ապրանքների առևտուրը կկարգավորվի սույն բաժնի դրույթներով, բացառությամբ 12-րդ հոդվածի:

2. Կստեղծվի ածխի և պողպատի հարցերով համագործակցող խումբ, որում կընդգրկվեն Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչները՝ մի կողմից, և Համայնքի ներկայացուցիչները՝ մյուս կողմից:

Համագործակցող խումբը կանոնավոր կերպով տեղեկություն կփոխանակի ածխի և պողպատի վերաբերյալ երկու Կողմերին հետաքրքրող բոլոր հարցերի շուրջ:

## Հոդված 19

Միջուկային նյութերի առևտուրը կկարգավորվի Ատոմային էներգիայի եվրոպական համագործակցության ստեղծման մասին Պայմանագրի դրույթներին համաձայն: Անհրաժեշտության դեպքում միջուկային նյութերի վաճառքը կենթարկվի առանձին Համաձայնագրի դրույթների, որը կկնքվի Հայաստանի Հանրապետության և Ատոմային էներգիայի եվրոպական համագործակցության միջև:

### Բաժին 4

Դրույթներ ձեռնարկատիրական գործունեության և ներդրումների վերաբերյալ

### Գլուխ 1

Աշխատանքային պայմաններ

## Հոդված 20

1. Հաշվի առնելով յուրաքանչյուր Անդամ պետությունում գործող օրենքները, պայմանները և գործընթացները՝ Համայնքը և Անդամ պետությունները կջանան երաշխավորել, որ Անդամ պետության տարածքում օրինականորեն աշխատող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ տածվող վերաբերմունքը զերծ լինի քաղաքացիության գործոնի վրա հիմնված որևէ խտրականությունից, ինչը վերաբերում է աշխատանքի պայմաններին, վարձատրությանը կամ աշխատանքից ազատմանը՝ այդ պետության քաղաքացիների համեմատ:

2. Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում գործող օրենքները, պայմանները և գործընթացները՝ Հայաստանի Հանրապետությունը կերաշխավորի, որ Հայաստանի Հանրապետության տարածքում օրինականորեն աշխատող Անդամ պետությունների քաղաքացիների նկատմամբ տածվող վերաբերմունքը ազատ լինի քաղաքացիության գործոնի վրա հիմնված որևէ խտրականությունից, ինչը վերաբերում է աշխատանքի պայմաններին, վարձատրությանը կամ աշխատանքից ազատմանը՝ իր քաղաքացիների համեմատ:

## Հոդված 21

Համագործակցության խորհուրդը կքննարկի, թե ինչպիսի բարելավումներ կարող են արվել գործարար մարդկանց աշխատանքային պայմաններում՝ համապատասխան Կողմերի

միջազգային պարտավորություններին, ներառյալ ԵԱՀԽ-ի Բոննի խորհրդակցության փաստաթղթում նշվածները:

## Հոդված 22

Համագործակցության խորհուրդը հանձնարարականներ կտա 20-րդ և 21-րդ հոդվածների կիրառման վերաբերյալ:

## Գլուխ 2

Ընկերությունների հիմնադրմանը և գործունեությանը առնչվող պայմաններ

## Հոդված 23

1. Համայնքը և դրա Անդամ պետությունները հայկական ընկերությունների հիմնադրման համար, ինչպես նշված է 25-րդ հոդվածի «դ» կետում, կտրամադրեն ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որը տրվում է ցանկացած երրորդ երկրի:

2. Առանց խախտելու 4-րդ Հավելվածում նշված վերապահումները, Համայնքը և դրա Անդամ պետությունները իրենց տարածքներում հիմնադրված հայկական ընկերությունների մասնաճյուղերին, դրանց գործունեության առումով, կտրամադրեն ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որը տրվում է Համայնքի ցանկացած ընկերության:

3. Համայնքը և դրա Անդամ պետությունները իրենց տարածքներում հիմնադրված հայկական ընկերությունների մասնաճյուղերին, դրանց գործունեության առումով, կտրամադրեն ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որը տրվում է ցանկացած երրորդ երկրի ընկերությունների մասնաճյուղերին:

4. Հայաստանի Հանրապետությունը Համայնքի ընկերությունների հիմնադրմանը, ինչպես նշված է 25-րդ հոդվածի «դ» կետում, կտրամադրի ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որը տրվում է հայկական կամ ցանկացած երրորդ երկրի ընկերություններին՝ կախված այն բանից, թե որն է ավելի բարենպաստ, և իր տարածքում հիմնադրված Համայնքի ընկերությունների մասնաճյուղերին և դուստր ձեռնարկություններին, դրանց գործունեության առումով, կտրամադրի ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որը տրվում է իր սեփական ընկերություններին կամ մասնաճյուղերին կամ ցանկացած երրորդ երկրի ընկերությանը կամ մասնաճյուղին՝ կախված այն բանից, թե որն է ավելի բարենպաստ:

## Հոդված 24

1. Չհակասելով 97-րդ հոդվածի դրույթներին՝ 23-րդ հոդվածի դրույթները չեն վերաբերում օդային տրանսպորտին, ներքին ջրային և ծովային տրանսպորտին:

2. Այնուամենայնիվ, ինչպես նշված է ստորև, այն գործունեության առումով, որը իրականացնում են նավարկային գործակալությունները միջազգային ծովային փոխադրման ծառայություններ մատուցելու համար, ներառյալ ծովային փոխադարձ սատարում ընդգրկող ինտերնոդալ տրանսպորտային գործողությունները, յուրաքանչյուր Կողմ, իր տարածքում գործող օրենսդրության և կանոնակարգող նորմերի համաձայն, պետք է ապահովի մյուս Կողմի ընկերությունների առևտրային ներկայությունը իր տարածքում մասնաճյուղերի կամ դուստր ձեռնարկությունների ձևով, հիմնադրման և գործելու համար ոչ պակաս բարենպաստ պայմաններով, քան այն պայմաններն են, որոնք ստեղծվում են իր սեփական ընկերությունների կամ որևէ երրորդ երկրի ընկերությունների մասնաճյուղերի կամ դուստր ձեռնարկությունների համար՝ կախված այն բանից, թե որն է ավելի նպաստավոր:

3. Նման գործողությունները ներառում են, բայց չեն սահմանափակում՝

ա) ծովային փոխադրումների մարկետինգն ու մատակարարումը և դրանց հետ կապված ծառայությունները՝ սպառողների հետ անմիջական կապի միջոցով, սկսած արժեքներ կազմելուց մինչև հաշիվ ներկայացնելը, եթե այս ծառայություններն իրականացնում կամ առաջարկում է ինքը՝ ծառայություն մատակարարողը կամ այն ծառայություն մատակարարողը, որի հետ ծառայություն մատակարարող գործակալությունը կնքել է առևտրային մշտական պայմանագիր,

բ) իրենց կամ իրենց սպառողների անունից որևէ տեսակի փոխադրամիջոցների կամ դրանց առնչվող ծառայությունների գնումը և օգտագործումը (ինչպես նաև վերավաճառքը իրենց սպառողներին), ներառյալ որևէ ձևով կատարվող ներքին փոխադրումների, մասնավորապես՝ ներքին ջրային ուղիներով, ավտոմայրուղիներով և երկաթուղով կատարվող փոխադրման ծառայությունները, որոնք անհրաժեշտ են ամբողջական ծառայություն ապահովելու համար,

գ) փաստաթղթերի նախապատրաստումը, ինչը վերաբերում է փոխադրվող ապրանքների փոխադրման փաստաթղթերին, մաքսային փաստաթղթերին կամ դրանց ծագմանն ու բնութագրին վերաբերող այլ փաստաթղթերին,

դ) ցանկացած միջոցով առևտրական տեղեկության տրամադրումը, ներառյալ համակարգչային տեղեկատվական համակարգերի և էլեկտրոնային տվյալների փոխանակումը (հաշվի

առնելով հեռահաղորդակցության միջոցների վերաբերյալ ցանկացած ոչ խտրական սահմանափակում),

ե) որևէ տեղական նավարկային գործակալության հետ ցանկացած գործնական համաձայնության կնքումը, որը կներառի փայամասնակցությունը ընկերությանը և անձնակազմի անդամների նշանակումը տեղացիներից (կամ ոչ տեղացիներից՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի համապատասխան դրույթները),

զ) ընկերությունների անունից գործելը, այդ թվում, խնդրանքի դեպքում, նավերի ընդունումը նավահանգստում կազմակերպելը կամ բեռները ընդունելը:

## Հոդված 25

Սույն Համաձայնագրի նպատակների համար՝

ա) «Հայկական ընկերություն» կամ «Համագործակցության ընկերություն», համապատասխանաբար, նշանակում են՝ ընկերություն, որը հիմնվել է Հայաստանի Հանրապետության և Անդամ պետության օրենսդրությանը համապատասխան և ունի պաշտոնապես գրանցված իր գրասենյակը կամ կենտրոնական վարչությունը կամ տնտեսական գործունեության հիմնական վայրը, համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության կամ Համայնքի տարածքում: Այնուամենայնիվ, բացի նրանից, որ ընկերությունը հիմնվում է, համապատասխանաբար, ըստ Հայաստանի Հանրապետության կամ Անդամ պետության օրենքների և պետք է ունենա իր պաշտոնապես գրանցված գրասենյակը, համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության կամ Համայնքի տարածքում, այն, համապատասխանաբար, կհամարվի հայկական կամ Համայնքի ընկերություն, եթե դրա գործողությունները իրականում և շարունակաբար կապված կլինեն, համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության կամ Անդամ պետության որևէ տնտեսության հետ,

բ) ընկերության «դուստր ձեռնարկություն» նշանակում է ընկերություն, որն արդյունավետորեն վերահսկվում է առաջին ընկերության կողմից,

գ) ընկերության «մասնաձյուղ» նշանակում է այդ ընկերության բաժանմունք, որը չունի իրավաբանական անձի կարգավիճակ, բայց ունի մշտական բնույթ, ինչպես, օրինակ, մայր ձեռնարկության ճյուղը, որը կառավարվում և նյութապես ապահովվում է երրորդ կողմի հետ գործարքներ կատարելու համար՝ այնպես, որ վերջինս, իմանալով հանդերձ, որ անհրաժեշտության դեպքում օրինական կապ կստեղծվի մայր ձեռնարկության հետ, որի գլխամասային գրասենյակը գտնվում է արտասահմանում, պարտավոր չէ անմիջապես գործ ունենալ նման մայր ձեռնարկության հետ, այլ

կարող է գործարք ձեռնարկել այն վայրում, որտեղ հաստատվել է ճյուղը՝ գործարքներ կատարելու նպատակով,

դ) «հիմնադրում» նշանակում է հայկական կամ Համայնքի ընկերությունների, ինչպես նշված է «ա» կետում, տնտեսական գործունեություն ծավալելու իրավունքը, համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետությունում կամ Համագործակցությունում մասնաճյուղեր և ճյուղեր հիմնելով,

ե) «գործունեություն» նշանակում է տնտեսական գործունեություն ծավալելու ուղղությամբ կատարվող քայլեր,

զ) «տնտեսական գործունեություն» նշանակում է արդյունաբերական, առևտրային և մասնագիտական բնույթի գործունեություն:

Ինչ վերաբերում է միջազգային ծովային փոխադրումներին, ներառյալ ծովային փոխադարձ սատարում ընդգրկող ինտերնոդալ տրանսպորտի գործողությունները, ապա Հայաստանի Հանրապետության կամ Անդամ պետությունների քաղաքացիները, որոնք, համապատասխանաբար, հաստատվել են Հայաստանի Հանրապետության կամ Համայնքի տարածքներից դուրս, և նավատորմային ընկերությունները, որոնք հաստատվել են Հայաստանի Հանրապետության և Համայնքի տարածքներից դուրս և վերահսկվում են, համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության կամ Անդամ պետության քաղաքացիների կողմից, նույնպես կօգտվեն սույն գլխի և 3-րդ գլխի դրույթներից, եթե դրանց նավերը պաշտոնապես գրանցված են, համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետությունում կամ Անդամ պետությունում՝ նրանց համապատասխան օրենսդրությունների համաձայն:

## Հոդված 26

1. Չնայած սույն Համաձայնագրի մյուս դրույթներին՝ չպետք է խոչընդոտվեն Կողմի զգուշավորության նպատակով ձեռնարկելիք միջոցառումները, ներառյալ ներդրողների, ավանդատուների, ապահովագրական գործակալների կամ այն անձանց պաշտպանության ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումները, որոնք հանդիսանում են ֆինանսական ծառայություն մատակարարողի լիազորված գործակալներ, ինչպես նաև ֆինանսական համակարգի ամբողջականությունն ու կայունությունը ապահովելու ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումները: Եթե նման միջոցառումները չեն համապատասխանում սույն Համաձայնագրի դրույթներին, ապա դրանք չպետք է օգտագործվեն որպես Կողմի՝ սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորություններից խուսափելու միջոց:

2. Սույն Համաձայնագրում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես Կողմին ներկայացվող պահանջ, որ վերջինս բացահայտի անհատ սպառողների գործարքների և հաշիվների վերաբերյալ տեղեկություն կամ հասարակական հաստատությունների որևէ գաղտնի կամ սեփականատիրական բնույթի տեղեկություն:

3. Սույն Համաձայնագրի նպատկների համար «ֆինանսական ծառայություններ» նշանակում է այն գործունեությունը, որը նշված է 3-րդ հոդվածում:

## Հոդված 27

Սույն Համաձայնագրի դրույթները չեն խոչընդոտի, որ յուրաքանչյուր Կողմ կիրառի որևէ միջոց, որն անհրաժեշտ է իր շուկա երրորդ երկրի մուտքի կապակցությամբ իր ընդունած միջոցների շրջանցումը՝ սույն Համաձայնագրի դրույթների միջոցով խափանելու համար:

## Հոդված 28

1. Չնայած սույն բաժնի 1-ին գլխի դրույթներին՝ հայկական ընկերությունը կամ Համայնքի ընկերությունը, որը հիմնվել է, համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության կամ Համայնքի տարածքում, իրավասու է ինքը կամ իր մասնաձյուղերի կամ դուստր ձեռնարկությունների միջոցով, հաստատության հյուրընկալող երկրի (համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության և Համայնքի տարածքում) գործող օրենսդրության համաձայն, վարձել աշխատողներ, որոնք հանդիսանում են, համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության կամ անդամ պետությունների քաղաքացի՝ պայմանով, որ այդ աշխատողները կկազմեն հիմնական անձնակազմը, ինչպես սահմանված է 2-րդ կետում, և որ նրանք կաշխատեն բացառապես այդ ընկերություններում կամ մասնաձյուղերում: Նման աշխատողների բնակության և աշխատանքի թույլտվությունը կտրվի միայն այդպիսի գործունեության ժամկետով:

2. Վերը նշված ընկերությունները, որոնք այսուհետ կանվանվեն «կազմակերպություններ», հիմնական անձնակազմի անդամները ներքոհիշյալ կատեգորիաներից «գ» ենթակետում սահմանված «ներկորպորացիոն փոխադրողներն» են՝ պայմանով, որ այդ կազմակերպության կողմից լինեն նրա գործընկերը (բացի բաժնետոմսերի վերահսկող փաթեթը տնօրինող բանետերերից) ամենաքիչը նման փոխադրմանը նախորդող մեկ տարվա ընթացքում:

Դրանք են՝



ա) անձինք, որոնք աշխատում են կազմակերպության վերին օղակներում և անմիջապես ղեկավարում են հաստատության աշխատանքները և, ընդհանուր առմամբ, ղեկավարվում և ցուցումներ են ստանում անմիջապես տնօրենների կամ բաժնետերերի խորհրդից կամ դրան համարժեք մարմնից, ներառյալ՝

- հաստատության կամ հաստատության բաժանմունքի կամ ենթաբաժանմունքի տնօրենները,

- այլ ղեկավարների, մասնագիտական կամ կառավարող օղակների աշխատողների գործունեությանը ղեկավարող և հսկող անձինք,

- անձինք, որոնք ունեն անձամբ աշխատանքի ընդունելու, աշխատանքից ազատելու կապակցությամբ և այլ կադրային հարցերով երաշխավորություն տալու իրավասություն,

բ) անձինք, որոնք աշխատում են կազմակերպություններում և ունեն բացառիկ գիտելիքներ, որն էական նշանակություն ունի հաստատության գիտահետազոտական սարքավորումները տեխնիկապես սպասարկելու կամ կառավարումն իրականացնելու տեսանկյունից: Այդպիսի գիտելիքների գնահատումը, տվյալ հաստատության բնույթին հատուկ գիտելիքների հետ մեկտեղ, կարող է ապահովել որակավորման բարձր մակարդակ՝ հատուկ տեխնիկական գիտելիքներ պահանջող աշխատանքի և ձեռնարկատիրական գործունեության համար, ներառյալ մասնագիտությանը տիրապետելը, որով աշխատելը պայմանավորված է հատուկ պահանջներով,

գ) «ներկորպորացիոն փոխադրվող» նշանակում է ֆիզիկական անձ, որն աշխատում է մի Կողմի տարածքում գտնվող կազմակերպությունում և ժամանակավորապես փոխադրվում է՝ ընդգրկվելով մյուս Կողմի տարածքում ծավալվող տնտեսական գործունեության մեջ: Համապատասխան կազմակերպությունը պետք է ունենա գործունեության հիմնական վայր Կողմերից մեկի տարածքում, իսկ փոխադրումը պետք է կատարվի այդ կազմակերպության հաստատություն (մասնաճյուղ, դուստր ձեռնարկություն), որը նմանատիպ արդյունավետ գործունեություն է ծավալում մյուս Կողմի տարածքում:

## Հոդված 29

1. Կողմերը կջանան անել ամեն ինչ՝ այնպիսի միջոցների ձեռնարկումից խուսափելու համար, որոնք կվատթարացնեն միմյանց՝ ընկերություններ հիմնելու և ավելի նպատակային գործելու համար անհրաժեշտ պայմանները, քան այն եղել է սույն Համաձայնագիրը ստորագրելու նախորդ օրը:

2. Սույն հոդվածի դրույթները չեն հակասում 37-րդ հոդվածի դրույթներին. 37-րդ հոդվածում նշված իրավիճակները կկարգավորվեն միայն այնտեղ նշված դրույթներով՝ բացառելով մնացածները:

3. Գործելով գործընկերության և համագործակցության ոգով, ինչպես նաև համաձայն 43-րդ հոդվածի դրույթների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Համայնքին կտեղեկացնի նոր օրենսդրություն կամ նոր կանոնակարգեր ընդունելու իր մտադրության մասին, որոնք կարող են ազդել այն պայմանների վրա, որոնցով Համայնքի ընկերությունների դուստր ձեռնարկությունները կամ մասնաձյուղերը հաստատվում և գործում են Հայաստանի Հանրապետությունում, և եթե դա ավելի կսահմանափակի այն իրավիճակը, որը եղել է սույն Համաձայնագիրը ստորագրելու նախորդ օրը: Համայնքը կարող է պահանջել Հայաստանի Հանրապետությունից իրեն տրամադրել նման օրենսդրական նորմերի և կանոնակարգերի նախագծերը և խորհրդակցել այդ նախագծերի առթիվ:

4. Եթե Հայաստանի Հանրապետությունում ընդունված նոր օրենսդրական նորմերը և կանոնակարգերը վատթարացնեն Համայնքի ընկերությունների դուստր ձեռնարկությունների և մասնաձյուղերի գործունեության համար անհրաժեշտ պայմանները՝ սահմանափակելով դրանք սույն Համաձայնագրի ստորագրման նախորդ օրը եղած իրավիճակի համեմատ, ապա նման օրենսդրությունը կամ կանոնակարգերը չեն կարող կիրառվել համապատասխան ակտը ուժի մեջ մտնելու օրը Հայաստանի Հանրապետությունում արդեն հաստատված դուստր ձեռնարկությունների և մասնաձյուղերի նկատմամբ՝ դրանց ուժի մեջ մտնելուց հետո երեք տարվա ընթացքում:

### Գլուխ 3

Ծառայությունների միջպետական մատակարարում Հայաստանի Հանրապետության և Համայնքի միջև

### Հոդված 30

1. Կողմերը, համաձայն սույն գլխի դրույթների, պարտավորվում են կատարել անհրաժեշտ քայլեր՝ խթանելու համար մի Կողմի տարածքում հաստատված հայկական կամ Համայնքի ընկերությունների կողմից ծառայությունների մատակարարումը մյուս Կողմի տարածքում գտնվող այն անձանց, որոնց համար դրանք նախատեսված են՝ հաշվի առնելով Կողմերի ծառայությունների ոլորտների զարգացումը:

2. Համագործակցության խորհուրդը պետք է հանձնարարականներ տա 1-ին կետի իրականացման համար:

### Հոդված 31

Կողմերը կհամագործակցեն՝ նպատակ ունենալով Հայաստանի Հանրապետությունում զարգացնել շուկայական կողմնորոշման ծառայությունների ոլորտը:

### Հոդված 32

1. Կողմերը պարտավորվում են արդյունավետորեն կիրառել առևտրային հիմունքներով միջազգային ծովային շուկա և ծովային երթուղիներ անարգել մուտք գործելու սկզբունքը.

ա) վերը նշված դրույթը չի հակասում այն իրավունքներին և պարտավորություններին, որոնք բխում են Միավորված ազգերի կազմակերպության «Ծովային կոնֆերանսների վարման կարգի մասին կոդի» վերաբերյալ Կոնվենցիայից և վերաբերում են սույն Համաձայնագրի մեկ կամ մյուս Կողմին: Ոչ կոնֆերանսային միությունները կարող են գործել՝ ազատ մրցակցելով կոնֆերանսների հետ այնքան ժամանակ, քանի դեռ նրանք կառաջնորդվեն առևտրային հիմունքներով ազատ մրցակցության սկզբունքով,

բ) Կողմերը հաստատում են ազատ մրցակցային միջավայր ստեղծելու իրենց պատրաստակամությունը՝ որպես չոր և հեղուկ ապրանքատեսակների մեծածախ առևտրի անհրաժեշտ պայման:

2. 1-ին կետում նշված սկզբունքները կիրառելիս Կողմերը՝

ա) սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո չեն կիրառի Համայնքի որևէ Անդամ պետության և նախկին Խորհրդային Միության միջև կնքված երկկողմ պայմանագրի դրույթները, որոնք վերաբերում են բեռների փոխադրումների բաժանմանը,

բ) չեն ընդգրկի բեռնափոխադրումների բաժանման վերաբերյալ դրույթները որևէ երրորդ երկրի հետ հետագայում կնքվելիք համաձայնագրում, բացի այն բացառիկ դեպքերից, երբ սույն Համաձայնագրի մեկ կամ մյուս Կողմի գծային նավարկային ընկերությունները այլ կերպ չեն ունենա երրորդ երկրի հետ գործարք կատարելու՝ այդ երկիր և այդ երկրից ապրանքների փոխադրում իրականացնելու շահավետ հնարավորություն,

գ) կարգելեն բեռնափոխադրումների բաժանման վերաբերյալ պայմանավորվածությունները չոր և հեղուկ ապրանքների մեծածախ առևտրի վերաբերյալ հետագա երկկողմ համաձայնագրերում,

դ) սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո կվերացնեն բոլոր միակողմանի միջոցները, ինչպես նաև վարչական,

տեխնիկական և այլ խոչընդոտները, որոնք կարող են ունենալ սահմանափակվող կամ խտրական ազդեցություն միջազգային ծովային փոխադրումների ծառայությունների ազատ մատակարարման վրա:

3. Յուրաքանչյուր Կողմ մյուս Կողմի քաղաքացիների կամ ընկերությունների կողմից օգտագործվող նավերի նկատմամբ պետք է տաժի ոչ պակաս բարենպաստ վերաբերմունք, քան այն տաժում է իր սեփական նավերի նկատմամբ՝ միջազգային առևտրի համար բաց նավահանգիստ մտնելու, նավահանգիստներում ենթակառուցվածքից օգտվելու, ինչպես նաև համապատասխան վճարումների և գանձումների, մաքսային ծառայությունների, բեռնման և բեռնաթափման ծառայությունների և խարսխակայան հատկացնելու առումով:

4. Համայնքի քաղաքացիներն ու ընկերությունները, որոնք միջազգային ծովային փոխադրումների ծառայություններ են մատուցում, ազատ կարող են մատուցել միջազգային ծովային-գետային փոխադրումների ծառայություններ Հայաստանի Հանրապետության ներքին ջրային ուղիներում և հակառակը:

### Հոդված 33

Կողմերի միջև փոխադրումների համակարգված զարգացումն ապահովելու նպատակով, ինչը կբավարարի նրանց առևտրային պահանջները, Կողմերը կարող են սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո կնքել հատուկ համաձայնագրեր՝ փոխադարձաբար շուկա մուտք գործելու և ավտոմայրուղիներով, երկաթուղով և ներքին ջրային ուղիներով, հնարավորության դեպքում նաև օդային ճանապարհով կատարվող փոխադրումների ծառայություններ մատուցելու պայմանների մասին:

### Գլուխ 4

### Ընդհանուր դրույթներ

### Հոդված 34

1. Սույն բաժնի դրույթները կկիրառվեն՝ հաշվի առնելով այն սահմանափակումները, որոնք բխում են հասարակական կարգի պաշտպանության, հասարակական անվտանգության կամ հասարակության առողջության պահպանության շահերից:

2. Դրանք չեն վերաբերում այն գործունեությանը, որը կապված է որևէ Կողմի տարածքում պաշտոնական իրավասությունների՝ անգամ ժամանակ առ ժամանակ կատարման հետ:

### Հոդված 35

Սույն բաժնի նպատակներից ելնելով՝ սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է խոչընդոտի, որ Կողմերը կիրառեն իրենց օրենքները և կանոնակարգերը ֆիզիկական անձանց մուտքի և ապրելու, աշխատանքի, աշխատանքային պայմանների, հաստատվելու և ծառայություններ մատուցելու վերաբերյալ՝ պայմանով, որ դրանք չեն կիրառվի այնպիսի եղանակով, որը վերացնում կամ սահմանափակում է Համաձայնագրի առանձին դրույթի համաձայն որևէ Կողմի ստացած առավելությունները: Սույն դրույթը չի հակասում 34-րդ հոդվածի կիրառմանը:

### Հոդված 36

Ղնկերությունները, որոնք վերահսկվում և բացառապես տնօրինվում են հայկական ղնկերությունների և Համայնքի ղնկերությունների կողմից համատեղ, նույնպես կօգտվեն 2-րդ, 3-րդ և 4-րդ գլուխների դրույթներով նախատեսված առավելություններից:

### Հոդված 37

Մեկ ամիս առաջ՝ նախքան Ծառայությունների առևտրի մասին Գլխավոր համաձայնագրից (ԾԱԳՀ) բխող համապատասխան պարտավորությունները ուժի մեջ մտնելը, ԾԱԳՀ-ով ամրագրված ոլորտների և միջոցառումների առումով, որևէ Կողմի վերաբերմունքը մյուսի հանդեպ ցանկացած դեպքում չի լինի ավելի բարենպաստ, քան այն, որը տածում է առաջին Կողմը ԾԱԳՀ-ի դրույթներին համապատասխան, և սա վերաբերում է ծառայությունների յուրաքանչյուր ոլորտին, ենթաոլորտին և մատակարարման ձևին:

### Հոդված 38

2-րդ, 3-րդ և 4-րդ գլուխների նպատակների համար նկատի չի առնվում Հայաստանի Հանրապետության կամ Համայնքի, դրա Անդամ պետությունների կողմից՝ տնտեսական ինտեգրացիայի վերաբերյալ համաձայնագրերում ամրագրված պարտավորություններին համապատասխան տրամադրվող ռեժիմը՝ համաձայն ԾԱԳՀ-ի 5-րդ հոդվածի սկզբունքների:

### Հոդված 39

1. Առավել բարենպաստ ազգի ռեժիմը՝ տրված սույն բաժնի դրույթների համաձայն, չպետք է վերաբերի Կողմերի սահմանած

հարկային առավելություններին, որոնք տրվում են կամ հետագայում կտրվեն կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ կամ այլ հարկային հարցերի վերաբերյալ համաձայնագրերով:

2. Սույն բաժնում ոչինչ չպետք է խոչընդոտի, որ Կողմերն ընդունեն կամ իրագործեն միջոցներ, որոնց նպատակն է կանխել հարկերից խուսափումը՝ համաձայն կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ համաձայնագրերի հարկերի մասին դրույթների և այլ հարկային համաձայնագրերի կամ տեղական հարկային օրենսդրության:

3. Սույն բաժնում ոչինչ չպետք է խոչընդոտի, որ Հայաստանի Հանրապետությունը կամ Անդամ պետությունները, իրենց հարկային օրենսդրության համապատասխան դրույթները կիրառելիս, տարբերակում մտցնեն միանման պայմաններում չգտնվող հարկատուների միջև, մասնավորապես, ինչը վերաբերում է վերջիններիս բնակության վայրին:

#### Հոդված 40

Առանց հակասելու 28-րդ հոդվածին, 2-րդ, 3-րդ և 4-րդ գլուխների ոչ մի դրույթ չպետք է մեկնաբանվի որպես հետևյալ իրավունքները տվող դրույթ.

- Հայաստանի Հանրապետության կամ Անդամ պետությունների քաղաքացիներին՝ համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության կամ Անդամ պետության տարածք որևէ կարգավիճակով, մասնավորապես, որպես բաժնետեր կամ ընկերության գործընկեր, դրա ղեկավար, աշխատող ծառայություններ մատակարարող կամ ստացող մուտք գործելու կամ ներսում մնալու,

- Համայնքում հայկական ընկերությունների դուստր ձեռնարկություններին կամ մասնաճյուղերին՝ Համայնքի տարածքում աշխատանքի վերցնելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին,

- Համայնքի ընկերությունների հայաստանյան դուստր ձեռնարկություններին կամ մասնաճյուղերին՝ Հայաստանի Հանրապետության տարածքում աշխատանքի վերցնելու Համայնքի համաքաղաքացիներին,

- հայկական ընկերություններին կամ Համայնքում հայկական ընկերությունների դուստր ձեռնարկություններին կամ մասնաճյուղերին՝ գործուղելու Հայաստանի քաղաքացիներին, այլ անձանց տնօրինությամբ և հսկողության տակ, ժամանակավոր աշխատանքային պայմանագրերով աշխատելու,

- Համայնքի ընկերություններին կամ Համայնքի ընկերությունների հայաստանյան դուստր ձեռնարկություններին կամ

մասնաճյուղերին ժամանակավոր աշխատանքային պայմանագրերով Անդամ պետությունների քաղաքացիներին գործուղելու:

Գլուխ 5  
Ընթացիկ վճարումներ և կապիտալ

Հոդված 41

1. Կողմերը պարտավորվում են թույլ տալ ազատ փոխարկելի տարադրամով կատարելու ցանկացած ընթացիկ վճարում Հայաստանի Հանրապետության և Համայնքի ռեզիդենտների միջև՝ կապված ապրանքների, ծառայությունների կամ ֆիզիկական անձանց՝ սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան կատարվող շարժի հետ:

2. Ինչ վերաբերում է վճարային հաշվեկշռի կապիտալի հաշվում կատարվող գործառնություններին, ապա սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո կապահովագրվեն հյուրընկալող երկրի օրենքներին համապատասխան կազմավորված ընկերություններում կատարված ուղղակի ներդրումների, ինչպես նաև 2-րդ գլխի դրույթների համաձայն կատարված ներդրումների հետ կապված կապիտալի ազատ շարժը և այդ ներդրումների ու դրանցից ստացված ցանկացած օգուտի լուծարումը կամ հայրենադարձումը:

3. Առանց հակասելու 2-րդ կամ 5-րդ կետերին, սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո չպետք է մտցվեն նոր տարադրամային սահմանափակումներ կապիտալի շարժի համար և, դրա հետ անմիջապես կապված, Հայաստանի Հանրապետության և Համայնքի ռեզիդենտների միջև ընթացիկ վճարումների կատարման համար, և արդեն իսկ գործող միջոցները չպետք է դառնան առավել սահմանափակ:

4. Կողմերը կխորհրդակցեն միմյանց հետ՝ հեշտացնելու համար, վերոհիշյալ 2-րդ կետում նշված ձևերից բացի, կապիտալի այլ ձևերի շարժը Հայաստանի Հանրապետության և Համայնքի միջև՝ ելնելով սույն Համաձայնագրի նպատակներից:

5. Վկայակոչելով սույն հոդվածի դրույթները՝ մինչև Միջազգային արժութային հիմնադրամի (ՄԱՀ) Համաձայնագրի հոդվածների 8-րդ հոդվածի իմաստով հայկական դրամի լիարժեք փոխարկելի դառնալը, Հայաստանի Հանրապետությունը բացառիկ դեպքերում կարող է կիրառել տարադրամային սահմանափակումներ՝ կապված կարճաժամկետ կամ միջին ժամկետով ֆինանսական վարկեր տալու կամ վերցնելու հետ՝ այն առումով, որ այդպիսի սահմանափակումները դրված են Հայաստանի Հանրապետության վրա այդպիսի վարկեր տալու համար և

թույլատրվում են՝ ելնելով ՄԱՀ-ում Հայաստանի Հանրապետության կարգավիճակից: Հայաստանի Հանրապետությունը պետք է կիրառի այս սահմանափակումները ոչ խտրական եղանակով: Դրանք կկիրառվեն այնպիսի եղանակով, որը նվազագույնս կվնասի սույն Համաձայնագրին: Հայաստանի Հանրապետությունը ժամանակին կտեղեկացնի Համագործակցության խորհրդին նման միջոցներ կիրառելու և դրանցում որևէ փոփոխություն կատարելու մասին:

6. Առանց հակասելու 1-ին և 2-րդ կետերին, բացառիկ դեպքերում, եթե կապիտալի շարժը Հայաստանի Հանրապետության և Համայնքի միջև պատճառ է դառնում կամ սպառնում է պատճառ դառնալ լուրջ դժվարությունների առաջացման Հայաստանի Հանրապետությունում կամ Համայնքում դրամավարկային քաղաքականության իրականացման համար, ապա Հայաստանի Հանրապետությունը և Համայնքը, համապատասխանաբար, կարող են Հայաստանի Հանրապետության և Համայնքի միջև կապիտալի շարժի առնչությամբ ձեռնարկել նախազուլչական միջոցներ ոչ ավելի, քան 6 ամիս ժամկետով, եթե այդպիսի միջոցները խիստ անհրաժեշտ են:

#### Գլուխ 6

Մտավոր, արդյունաբերական և առևտրային սեփականության պաշտպանությունը

#### Հոդված 42

1. Համաձայն սույն հոդվածի և 2-րդ Հավելվածի դրույթների՝ Հայաստանի Հանրապետությունը կշարունակի զարգացնել մտավոր, արդյունաբերական և առևտրային սեփականության իրավունքների պաշտպանությունը, որպեսզի մինչև սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 5-րդ տարվա վերջը այդ պաշտպանության մակարդակը հասցվի Համայնքում առկա մակարդակին, ներառյալ նման իրավունքներն ամրապնդող արդյունավետ միջոցները:

2. Մինչև սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 5-րդ տարվա վերջը, Հայաստանի Հանրապետությունը կանդամակցի 2-րդ Հավելվածի 1-ին կետում նշված մտավոր, արդյունաբերական և առևտրային սեփականության իրավունքների մասին բազմակողմ կոնվենցիաներին, որոնց Կողմերն են Անդամ պետությունները, կամ որոնք «դե ֆակտո» կիրառվում են Անդամ պետությունների կողմից՝ ըստ այդ կոնվենցիաներում ամրագրված համապատասխան դրույթների:

#### Բաժին 5

Օրենսդրական համագործակցություն



## Հոդված 43

1. Կողմերն ընդունում են, որ Հայաստանի Հանրապետության և Համայնքի միջև տնտեսական կապերն ուժեղացնելու համար կարևոր պայման է այն, որ Հայաստանի Հանրապետությունում գործող, ինչպես նաև ապագա օրենսդրությունը մերձեցվի Համայնքի օրենսդրությանը: Հայաստանի Հանրապետությունը կձգտի անել այնպես, որ իր օրենսդրությունն աստիճանաբար դառնա համատեղելի Համայնքի օրենսդրության հետ:

2. Օրենքների մերձեցումը կընդգրկի, մասնավորապես, հետևյալ ոլորտները՝ մաքսային, ձեռնարկությունների մասին, բանկային, ձեռնարկությունների հաշվեկշիռների և հարկերի մասին, մտավոր սեփականության, աշխատավայրում աշխատողների պաշտպանություն, ֆինանսական ծառայությունների, մրցակցության, պետական գնումների, մարդկանց կյանքի և առողջության պաշտպանության, կենդանիների և բույսերի, շրջակա միջավայրի պաշտպանության, սպառողների պաշտպանության, անուղղակի հարկումների, տեխնիկական կանոնների և ստանդարտների, ատոմային էներգիայի և տրանսպորտի վերաբերյալ օրենքները և կանոնակարգերը:

3. Համայնքը Հայաստանի Հանրապետությանը կտրմադրի տեխնիկական օգնություն հետևյալ միջոցառումների իրականացման համար, որոնք, ի թիվս այլոց, կարող են ներառել՝

- փորձագետների փոխանակում,
- նախնական տեղեկության մատակարարում հատկապես համապատասխան օրենսդրության վերաբերյալ,
- դասընթացների կազմակերպում,
- մասնագետների վերապատրաստման գործունեություն,
- օգնություն համապատասխան ոլորտների վերաբերյալ Համայնքի օրենսդրության թարգմանության համար:

4. Կողմերը համաձայնում են քննարկել իրենց համապատասխան մրցակցության մասին օրենքները կիրառելու ուղիները՝ համաձայնության գալու նպատակով, այն դեպքերում, երբ դրանց միջև ծավալվում է առևտրային գործունեություն:

## Բաժին 6

### Տնտեսական համագործակցություն

## Հոդված 44

1. Հայաստանի Հանրապետությունը և Համայնքը կհաստատեն տնտեսական համագործակցություն, որի նպատակն է օժանդակել

Հայաստանի Հանրապետությունում տնտեսական բարեփոխումների, վերականգնման և կայուն զարգացման գործընթացին: Այդպիսի համագործակցությունը կամրապնդի գոյություն ունեցող տնտեսական կապերը՝ ի շահ երկու Կողմերի:

2. Կողմերի քաղաքականությունները և մյուս միջոցառումները կնախատեսվեն այնպես, որ հանգեցնեն Հայաստանի Հանրապետությունում տնտեսական և սոցիալական բարեփոխումների իրականացման, տնտեսական և առևտրային համակարգերի վերակառուցման, որոնք պետք է բխեն սոցիալական կայուն և ներդաշնակ զարգացման պահանջներից: Նրանք համատեղ կկազմակերպեն նաև ընդհանուր քննարկումներ շրջակա միջավայրի հարցերով:

3. Այս նպատակով համագործակցությունը կուղղվի, մասնավորապես, տնտեսական և սոցիալական զարգացմանը, մարդկային ռեսուրսներին, զարգացմանը, ձեռնարկությունների օժանդակմանը (ներառյալ սեփականաշնորհումը, ներդրումների խրախուսումը և պաշտպանությունը, փոքր և միջին ձեռնարկությունները), հանքարդյունաբերական և հումքային նյութերին, գիտությանը և տեխնիկային, գյուղատնտեսությանը և սննդին, էներգետիկային (ատոմային էներգիայի անվտանգությանը), տրանսպորտին, զբոսաշրջությանը, հեռակապի միջոցներին, ֆինանսական ծառայությունների, դրամական կուրուստների դեմ պայքարին (դրամավարկային քաղաքականություն), առևտրային, մաքսային, վիճակագրական համագործակցությանը, տեղեկատվությանը և հաղորդակցությանը, շրջակա միջավայրի պաշտպանությանը և տարածաշրջանային համագործակցությանը:

4. Հատուկ ուշադրություն կդարձվի այն միջոցառումներին, որոնք կարող են խթանել համագործակցությունը Անդրկովկասյան տարածաշրջանի անկախ պետությունների և մյուս հարևան պետությունների հետ՝ նպատակ ունենալով կարգավորել ներդաշնակ զարգացումը տարածաշրջանում:

5. Անհրաժեշտության դեպքում սույն Համաձայնագրում ամրագրված տնտեսական և այլ համագործակցությունները կարող են իրագործվել Համայնքից ստացվող տեխնիկական օգնությամբ՝ հաշվի առնելով Համայնքի համապատասխան խորհրդի կանոնակարգը անկախ պետություններին տեխնիկական օգնություն տրամադրելու վերաբերյալ, Համայնքի կողմից Հայաստանի Հանրապետությանը ցույց տրվելիք տեխնիկական օգնության ծրագրով համաձայնեցված առաջնային կարևորության հարցերը, այդ տեխնիկական օգնության համակարգումը և իրականացման գործընթացները:

## Համագործակցությունը ապրանքների առևտրի և ծառայությունների բնագավառում

Կողմերը կհամագործակցեն՝ երաշխավորելով, որ Հայաստանի Հանրապետության միջազգային առևտուրը կկարգավորվի ԱՀԿ-ի կանոնների համաձայն:

Այդպիսի համագործակցությունը կներառի հատուկ հարցերի մշակում, որոնք ուղղակիորեն վերաբերում են առևտրային գործունեությունը խթանելուն՝ ներառյալ.

- առևտրային գործունեության և դրան առնչվող հարցերի, ներառյալ վճարումների քաղաքականության մշակումը,
- համապատասխան օրենքների նախագծերի պատրաստումը,
- ԱՀԿ-ին վերջնականապես անդամակցելու համար Հայաստանի Հանրապետությանը նախապատրաստման հարցում օգնության շարունակումը:

### Հոդված 46

#### Արդյունաբերական համագործակցություն

1. Համագործակցության նպատակը մասնավորապես կլինի խթանել.

- երկու կողմերի տնտեսավարող սուբյեկտների միջև գործնական կապերի զարգացումը,

- Հայաստանի Հանրապետության՝ վերակառուցման ուղղությամբ կատարվող քայլերին, Հայաստանի Հանրապետության՝ արդյունաբերության մեջ հետևողական ներդրումների ներգրավման գործընթացին համագործակցության մասնակցությանը,

- ձեռնարկությունների կառավրման կատարելագործմանը,

- առևտրի վերաբերյալ կանոնների և համապատասխան փորձի կատարելագործմանը,

- շրջակա միջավայրի պաշտպանությանը:

2. Սույն հոդվածի դրույթները չեն ազդի Համայնքում գործող մրցակցության վերաբերյալ կանոնների վրա, որոնցով կարգավորվում են ձեռնարկումները:

### Հոդված 47

#### Ներդրումների խրախուսում և պաշտպանություն

1. Հաշվի առնելով համագործակցության և Անդամ պետությունների համապատասխան լիազորություններն ու իրավասությունները, համագործակցության նպատակը կլինի ներքին և արտաքին մասնավոր ներդրումների համար բարենպաստ միջավայրի, հատկապես ներդրումների պաշտպանության համար

ավելի բարենպաստ պայմանների ստեղծումը՝ կապիտալի փախանցման և հնարավոր ներդրումների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման ճանապարհով:

2. Համայնքի նպատակներն են, մասնավորապես՝

- հարկ եղած դեպքում Հայաստանի Հանրապետության և Անդամ պետությունների միջև ներդրումների խրախուսման և պաշտպանության մասին համաձայնագրերի կնքումը,

- հարկ եղած դեպքում Հայաստանի Հանրապետության և Անդամ պետությունների միջև կրկնակի հարկումից խուսափելու մասին համաձայնագրերի կնքումը,

- Հայաստանի տնտեսությունում արտասահմանյան ներդրումներ ներգրավելու համար նպաստավոր պայմանների ստեղծումը,

- կայուն և համապատասխան առևտրական օրենքների ու պայմանների ստեղծումը և օրենքների, կանոնակարգերի ու ներդրումների բնագավառում վարչական փորձի վերաբերյալ տեղեկության փոխանակումը,

- հնարավոր ներդրումների վերաբերյալ տեղեկության փոխանակում, ի թիվս այլոց, առևտրական տոնավաճառների, ցուցահանդեսների, առևտրական շաբաթների և այլ միջոցառումների ձևով:

#### Հոդված 48

##### Պետական գնումներ

Կողմերը կհամագործակցեն՝ ապրանքների և ծառայությունների մասին պայմանագրերի համար բաց և մրցակցային պայմաններ զարգացնելու նպատակով, մասնավորապես, տեղերների միջոցով:

#### Հոդված 49

##### Համագործակցություն ստանդարտների և գնահատման հաստատման բնագավառում

1. Կողմերի միջև համագործակցությունը կնպաստի որակի բնագավառում ըստ միջազգայնորեն ընդունված չափանիշների, սկզբունքների և ուղեցույցների կատարվող ստուգաբանմանը: Անհրաժեշտ միջոցառումները կօժանդակեն փոխադարձ ճանաչողության ճանապարհով համապատասխանելիության ստուգաբանման առաջընթացին, ինչպես նաև հայկական արտադրանքի որակի բարձրացմանը:

2. Այս նպատակով Կողմերը կձգտեն համագործակցել տեխնիկական օգնության ծրագրերում, որոնք՝

- կնպաստեն այդ բնագավառներում մասնագիտացված կազմակերպությունների և հաստատությունների հետ համապատասխան համագործակցությանը,

- կնպաստեն համագործակցության տեխնիկական կանոնակարգերի օգտագործմանը և Եվրոպական ստանդարտների ու համապատասխանելության ստուգաբանման ընթացակարգերի կիրառմանը,

- հնարավորություն կտան որակի կառավարման բնագավառում տեխնիկական տեղեկության և փորձի փոխանակմանը:

#### Հոդված 50

##### Հանքարդյունաբերություն և հումքանյութեր

1. Կողմերը նպատակադրվում են հանքարդյունաբերության և հումքանյութերի արտադրության բնագավառում կապիտալ ներդրումների և առևտրի զարգացմանը:

2. Համագործակցությունը, մասնավորապես, կկենտրոնացվի հետևյալ բնագավառներում`

- հանքային նյութերի և երկաթ չպարունակող մետաղների հետախուզման հեռանկարին վերաբերող տեղեկության փոխանակման,

- համագործակցության համար իրավական հիմքերի ստեղծման,

- առևտրի հարցերի,

- շրջակա միջավայրի մասին օրենսդրության ընդունման և կիրարկման,

- մասնագիտական վերապատրաստման,

- հանքարդյունաբերության անվտանգության:

#### Հոդված 51

##### Գիտատեխնիկական համագործակցություն

1. Կողմերը կնպաստեն փոխշահավետ հիմունքներով համագործակցության զարգացմանը քաղաքացիական նպատակներով կատարվող գիտական հետազոտությունների և տեխնիկական զարգացման բնագավառում /ԳՏԶ/ հաշվի առնելով ռեսուրսների առկայությունը, իրենց համապատասխան ծրագրերին համարժեք մատչելիության հիման վրա, ընդ որում` մտավոր, արդյունաբերական և կոմերցիոն սեփականության իրավունքների արդյունավետ պաշտպանության /ՄՍԻՊ/ համապատասխան մակարդակ պահովելու պայմանով:

2. Գիտատեխնիկական համագործակցությունը ընդգրկում է.

- գիտատեխնիկական տեղեկության փոխանակում,

- համատեղ միջոցառումներ ՊՏՁ-ի բնագավառում,
- մասնագիտական վերապատրաստման միջոցառումներ և փոխանակման ծրագրեր՝ երկու Կողմերի ՊՏՁ-ների մեջ ընդգրկված գիտնականների, հետազոտողների և մասնագետների համար:

Երբ համագործակցությունը դրսևորվում է այնպիսի գործունեությունների ձևով, որոնք ընդգրկում են մասնագետների ուսուցում և/կամ պատրաստում, այն կիրականացվի 52-րդ հոդվածին համապատասխան:

Կողմերը, փոխադարձ համաձայնության հիման վրա, կարող են գիտության և տեխնիկայի բնագավառում համագործակցություն իրականացնել այլ ձևերով:

Այդպիսի համագործակցություն իրականացնելիս հատուկ ուշադրություն կդարձվի այն գիտնականներին, ինժեներներին, հետազոտողներին և մասնագետներին, որոնք ընդգրկված են եղել կամ ընդգրկված են զանգվածային ոչնչացման զենքին առնչվող հետազոտություններում և/կամ դրանց արտադրության մեջ:

3. Սույն հոդվածով նշված համագործակցությունը կիրականացվի բանակցությունների արդյունքում յուրաքանչյուր Կողմում գործող ընթացակարգերին համապատասխան ձեռք բերված հատուկ պայմանավորվածությունների համաձայն, որից կթխեն, ի թիվս այլոց, ՄՄԻՊ-ի վերաբերյալ համապատասխան դրույթները:

## Հոդված 52

### Կրթություն և մասնագիտական վերապատրաստում

1. Կողմերը կհամագործակցեն Հայաստանի Հանրապետությունում ինչպես պետական, այնպես էլ մասնավոր սեկտորներում հանրակրթական և մասնագիտական որակավորման մակարդակը բարձրացնելու նպատակով:

2. Համագործակցությունը մասնավորապես կկենտրոնացվի հետևյալ բնագավառներում՝

- Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և մասնագիտական վերապատրաստման համակարգերի կատարելագործում, ներառյալ բարձրագույն ուսումնական հաստատությունների վկայագրման և բարձրագույն կրթության վկայագրերի համակարգը,

- պետական և մասնավոր սեկտորների ղեկավարների և պետական քաղաքացիական ծառայողների վերապատրաստումը առաջնային կարևորության ոլորտների, որոնք նախապես կորոշվեն,

- համագործակցություն ուսումնական հաստատությունների միջև և ուսումնական հաստատությունների և ֆիրմաների միջև,

- ուսուցիչների, ուսանողների, կառավարիչների, երիտասարդ գիտնականների ու հետազոտողների և երիտասարդության ներկայացուցիչների փոխանակում,

- Եվրոպական ուսումնական համապատասխան հաստատություններում դասավանդման խրախուսում,

- Համայնքի անդամ պետությունների ազգային լեզուների ուսուցում,

- մասնագիտական որակավորում ունեցող համաժամանակյա թարգմանիչների կատարելագործում,

- լրագրողների վերապատրաստում,

- հրահանգիչների վերապատրաստում:

Մի Կողմի հնարավոր մասնակցությունը մյուս Կողմի կրթության և մասնագիտական վերապատրաստման բնագավառի համապատասխան ծրագրերում կիրականացվի նրանց համապատասխան ընթացակարգերի համաձայն, և, անհրաժեշտության դեպքում, հաստատությունների շրջանակները և համագործակցության պլանները կկառուցվեն Համայնքի «ԹԵՄՊՈՒՄ» ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության հիման վրա:

### Հոդված 53

Գյուղատնտեսության և ագրոարդյունաբերության բնագավառ

Համայնքը տվյալ բնագավառում նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետությունում ագրարային բարեփոխումների իրականացմանը, գյուղատնտեսության, ագրոարդյունաբերական և ծառայությունների ոլորտների արդիականացմանը, սեփականաշնորհմանը և վերակառուցմանը, հայկական արտադրանքի համար ներքին և արտաքին շուկաների զարգացմանը՝ շրջակա միջավայրի պահպանությունը ապահովելու պայմաններում՝ հաշվի առնելով պարենի առաջարկի ապահովման բարելավման անհրաժեշտությունը, ինչպես նաև ագրոբիզնեսի գյուղատնտեսական արդյունքների վերամշակման և բաշխման զարգացումը:

Կողմերը կձգտեն նաև հասնել հայկական ստանդարտների աստիճանական համապատասխանեցմանը արդյունաբերական արտադրաքանակի գյուղատնտեսական սննդատեսակների վերաբերյալ Համայնքի տեխնիկական նորմերին, ներառյալ սանիտարական և ֆիտոսանիտարական ստանդարտները:

### Հոդված 54 Էներգետիկա

1. Համագործակցությունը տեղի կունենա շուկայական տնտեսության և Եվրոպական էներգետիկ խարտիայի սկզբունքներին համապատասխան՝ հաշվի առնելով էներգետիկ խարտիայի պայմանագիրը, էներգետիկայի արդյունավետության և առնչվող շրջական միջավայրի ասպեկտների վերաբերյալ Արձանագրությունը, հիմնվելով Եվրոպայում էներգիայի շուկաների աճող ինտեգրացման վրա:

2. Համագործակցությունը կընդգրկի նաև հետևյալ բնագավառները՝

- էներգետիկ քաղաքականության մշակում և զարգացում,
- էներգետիկ սեկտորի կառավարման և կարգավորման բարելավում՝ շուկայական տնտեսությանը համապատասխան,
- էներգիայի մատակարարման տնտեսապես և շրջակա միջավայրի առումով ընդունելի պայմաններով անվտանգության կատարելագործում,
- էներգիայի խնայողության և արդյունավետ օգտագործման խրախուսում, էներգետիկ խարտիայի, էներգիայի արդյունավետության և առնչվող շրջակա միջավայրի ասպեկտների մասին Արձանագրության իրագործում,
- էներգետիկ ենթակառուցվածքների արդիականացում,
- էներգիայի բոլոր տեսակների էներգամատակարարման և սպառման տեխնոլոգիաների կատարելագործում,
- էներգետիկայի ոլորտում կառավարման և տեխնիկական վերապատրաստում,
- էներգետիկ արտադրանքի և հումքի տեղափոխում և տարանցում,
- էներգիայի ոլորտում առևտրի և կապիտալ ներդրումների ընդլայնման համար կառուցվածքային, իրավական, հարկային և մի շարք այլ անհրաժեշտ միջոցների ընդունում,
- հիդրոէներգիայի և էներգիայի այլ վերականգնելի աղբյուրների զարգացում:

3. Կողմերը էներգետիկ ոլորտում կփոխանակեն կապիտալ ներդրումների ծրագրերի վերաբերյալ համապատասխան տեղեկություն, մասնավորապես, նավթատարների և գազատարների կառուցման և վերանորոգման, ինչպես նաև էներգետիկ արտադրանքի փոխադրման այլ միջոցների վերաբերյալ:

Նրանք կհամագործակցեն՝ նպատակ ունենալով, էներգետիկայի ոլորտում կապիտալ ներդրումների առումով, հնարավորին չափ արդյունավետ կիրառել 4-րդ բաժնի 47-րդ հոդվածի դրույթները:



Հոդված 55  
Շրջակա միջավայր

1. Հաշվի առնելով Եվրոպական էներգետիկ խարտիայի և 1993 թվականի Լյուցերնի կոնֆերանսում ընդունված Հռչակագիրը, ինչպես նաև էներգետիկ խարտիայի պայմանագիրը ու հատկապես դրա 19-րդ հոդվածը և էներգիայի արդյունավետության ու շրջակա միջավայրին առնչվող ասպեկտների վերաբերյալ արձանագրությունը՝ Կողմերը կգարգացնեն և կամրապնդեն իրենց համագործակցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության բնագավառում:

2. Համագործակցության նպատակն է պայքարը շրջակա միջավայրի վիճակի վատթարացման դեմ, որը, մասնավորապես, ներառում է՝

- աղտոտվածության մակարդակների արդյունավետ դիտարկում և շրջակա միջավայրի դիտարկում ու գնահատում, ինչպես նաև շրջակա միջավայրի վիճակի մասին տեղեկատվական համակարգ,

- պայքար օդի և ջրի տեղական, տարածաշրջանային և միջսահմանային աղտոտվածության դեմ,

- շրջակա միջավայրի վերականգնում,

- էներգիայի կայուն, ներգործուն և բնապահպանության առումով արդյունավետ արտադրություն և օգտագործում,

- արդյունաբերական գործարանների անվտանգություն,

- քիմիկատների դասակարգում և օգտագործման անվտանգություն,

- ջրի որակի գնահատում,

- արտադրական թափոնների կրճատում, վերամշակում և անվտանգ վերացում,

- Բազելի կոնվենցիայի նորմերի կիրառում,

- գյուղատնտեսության, աղուտային քայքայման և քիմիական աղտոտվածության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա,

- անտառների պահպանում,

- կենսաբանական բազմաձևության պահպանում, արգելավայրերի և կենսաբանական ռեսուրսների կայուն օգտագործում ու կառավարում,

- հողօգտագործման պլանավորում, ներառյալ շինարարության և քաղաքաշինության պլանավորումը,

- տնտեսական և հարկային լծակների կիրառում,

- գլոբալ կլիմայական փոփոխություններ,

- բնապահպանական կրթություն և իրազեկություն,

- ռադիոակտիվ նյութերով վնասված տարածքների վերականգնմանը, առողջությանն ու սոցիալական հարցերին ուղղված տեխնիկական օգնություն,

- միջսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա փոխազդման գնահատականի մասին «Էսպոռլի» կոնվենցիայի կիրառում:

3. Համագործակցությունը կիրականացվի հետևյալ ձևերով, մասնավորապես.

- աղետների այլ արտակարգ իրավիճակների կանխատեսում,

- տեղեկության և փորձագետների փոխանակում, ներառյալ դրանց փոխանակումը «մաքուր» տեխնոլոգիաների և բիոտեխնոլոգիաների անվտանգ բնապահպանական նկատառումներով վստահելի կիրառման բնագավառում,

- համատեղ գիտահետազոտական գործունեություն,

- համագործակցության ստանդարտներին առնչվող օրենսդրական դաշտի կատարելագործում,

- բնապահպանությանը վերաբերող վերապատրաստական դասընթացներ և կառուցվածքային ամրապնդում,

- համագործակցություն տարածաշրջանային մակարդակով, ներառյալ՝ համագործակցություն Շրջակա միջավայրի եվրոպական գործակալության շրջանակներում և միջազգային մակարդակով,

- կայուն զարգացման հասնելու նպատակով և առանձնապես գլոբալ և կլիմայական հիմնահարցում ռազմավարությունների մշակում,

- շրջակա միջավայրի վրա ներազդեցության հետազոտություններ:

#### Հոդված 56 Տրանսպորտ

Կողմերը կզարգացնեն և կամրապնդեն իրենց համագործակցությունը տրանսպորտի բնագավառում:

Այդ համագործակցությունը նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետության տրանսպորտային համակարգերի և ցանցերի նորացմանն ու վերակառուցմանը, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, ավելի գլոբալ տրանսպորտային համակարգ ստեղծելու նպատակով տրանսպորտային համակարգերի համատեղելիության զարգացմանն ու ապահովմանը: Հատուկ ուշադրություն կդարձվի Անդրկովկասյան տարածաշրջանի անկախ պետությունների միջև և այլ հարևան պետությունների հետ հաղորդակցության բոլոր ավանդական միջոցների գործադրմանը: Համագործակցությունը կընդգրկի, ի թիվս այլոց՝

- ավտոճանապարհային տրանսպորտի, երկաթուղու, օդնավակայանների, նավահանգիստների կառավարման և գործունեության արդիականացումը,

- երկաթգծերի, ջրային ուղիների, ավտոմայրուղիների, նավահանգիստների, օդանավակայանների և օդագնացության ենթակառուցվածքի արդիականացումն ու զարգացումը, ներառյալ հիմնական տրանսպորտային ուղիների նորացումը, որը փոխադարձ հետաքրքրություն է ներկայացնում տրանս-Եվրոպական ճանապարհների և տրանսպորտի այլ տեսակների արդիականացման համար, մասնավորապես, նրանց, որոնք ընդգրկված են ՏՐԱՍԵԿԱ ծրագրում,

- բազմաբնույթ փոխադրումների խրախուսում և զարգացում,

- հետազոտական և զարգացման համատեղ ծրագրերի խրախուսում,

- օրենսդրական և կառուցվածքային շրջանակների հիմքերի նախապատրաստում, տրանսպորտային քաղաքականության և դրա իրականացման մեխանիզմների կատարելագործում, ներառյալ սեփականաշնորհումը տրանսպորտի բնագավառում:

#### Հոդված 57

Կողմերը, համապատասխան իրենց լիազորությունների և իրավասությունների, կընդլայնեն և կամրապնդեն համագործակցությունը հետևյալ բնագավառներում.

- հեռահաղորդակցության միջոցների և փոստային ծառայությունների ոլորտների զարգացման բնագավառում քաղաքականության և ուղեցույցների մշակում,

- հեռահաղորդակցության միջոցների և փոստային ծառայությունների վարձաչափերի քաղաքականության և գործավարության սկզբունքների զարգացում,

- տեխնոլոգիաների և «նոու-հաու»-ի փոխանցում, ներառյալ՝ Եվրոպական տեխնիկական ստանդարտները և հավաստագրային համակարգերը,

- հեռահաղորդակցության միջոցների և փոստային ծառայությունների վերաբերյալ ծրագրի զարգացման խրախուսում ու կապիտալ ներդրումների ներգրավում,

- հեռահաղորդակցության միջոցների և փոստային ծառայությունների մատուցման որակի ու արդյունավետության բարձրացում՝ ենթաոլորտների գործունեությունների ազատականացման ճանապարհով,

- հեռահաղորդակցության առաջադիմական կիրառություն, հատկապես էլեկտրոնային ֆոնդերի փոխանցման բնագավառում,

- հեռահաղորդակցության միջոցների ցանցերի կառավարում և դրանց օպտիմիզացում.

- հեռահաղորդակցության միջոցների և փոստային ծառայությունների մատակարարման և ռադիոհաճախականության սպեկտրի օգտագործման համար համապատասխան կարգավորիչ կայանների ձեռքբերում,

- շուկայական պայմաններում հեռահաղորդակցության միջոցների և փոստային ծառայությունների գործառնանը վերաբերող գործնական դասընթացներ:

## Հոդված 58

### Ֆինանսական ծառայություններ

Համագործակցությունը մասնավորապես նպատակաուղղված է փոխադարձ հաշվարկների համընդհանուր ընդունված համակարգերում Հայաստանի Հանրապետության ընդգրկմանը:

Տեխնիկական օգնությունը կկենտրոնացվի հետևյալ ասպեկտների վրա`

- բանկային և ֆինանսական ծառայությունների, վարկային ռեսուրսների ընդհանուր շուկայի զարգացում, Հայաստանի Հանրապետության ներգրավում համընդհանուր ճանաչում ստացած փոխադարձ հաշվարկների համակարգերում,

- Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի և դրա հաստատությունների զարգացում, փորձի փոխանակում և անձնակազմի վերապատրաստում,

- ապահովագրական ծառայությունների զարգացում, որը, ի թիվս այլոց, բարենպաստ հիմք կարող է ստեղծել Հայաստանի Հանրապետության ապահովագրական ոլորտում համատեղ ձեռնարկությունների հիմնադրման գործում Համագործակցության ընկերությունների մասնակցության համար, ինչպես նաև` արտահանվող վարկի ապահովագրության զարգացում:

Այդ համագործակցությունը մասնավորապես կնպաստի Հայաստանի Հանրապետության և անդամ պետությունների միջև հարաբերությունների զարգացմանը:

## Հոդված 59

1. Կողմերը կամրապնդեն համագործակցությունը տարածաշրջանային զարգացման և հողօգտագործման պլանավորման հարցերում:

2. Կողմերը կխրախուսեն ազգային տարածաշրջանային և տեղական իշխանությունների միջև տեղեկության փոխանակումը` տարածաշրջանային զարգացման պլանավորման համար

պատախանատու պետական կազմակերպությունների միջև անմիջական կապերի, ի թիվս այլոց, տարածաշրջանային զարգացումը խրախուսելու ուղիներ և մեթոդներ փոխանակելու նպատակով:

#### Հոդված 60

#### Սոցիալական համագործակցություն

1. Առողջապահության և անվտանգության առումով, Կողմերը կզարգացնեն համագործակցությունը՝ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության մակարդակը բարելավելու նպատակով:

Համագործակցությունը մասնավորապես ընդգրկում է.

- ուսուցում և մասնագիտական վերապատրաստում առողջապահության և անվտանգության հարցերում՝ հատուկ ուշադրություն դարձնելով բարձր ռիսկի գործոնի հետ կապված գործունեության ոլորտներին,

- մասնագիտական հիվանդությունների և մասնագիտական այլ բացասական հետևանքների կանխարգելմանն ուղղված միջոցառումների խրախուսում և կատարելագործում,

- խոշոր աղետների կանխարգելում և թունավոր քիմիկատների հետ կապված աշխատանքների կառավարում,

- աշխատանքային միջավայրում աշխատողների առողջության պահպանմանը և անվտանգությանը վերաբերող հետազոտությունների կատարում՝ հիմնարար գիտելիքներ կուտակելու նպատակով:

2. Ջբաղվածության հարցերում համագործակցությունը կներառի բացառապես տեխնիկական օգնություն.

- աշխատանքի շուկայի օպտիմիզացում,

- զբաղվածության հարցերով ծառայությունների և խորհրդատվական ծառայությունների համակարգերի նորացում,

- վերակառուցման ծրագրերի պլանավորում և կառավարում,

- տեղական զբաղվածության խրախուսում,

- ճկուն զբաղվածության, ներառյալ անհատական աշխատանքային գործունեությունը խթանող և ձեռներեցությունը խրախուսող ծրագրերի մասին տեղեկության փոխանակում:

3. Կողմերը հատուկ ուշադրություն կդարձնեն համագործակցությանը սոցիալական պաշտպանության ոլորտում, որը, ի թիվս այլոց, կընդգրկի Հայաստանի Հանրապետությունում սոցիալական պաշտպանության բարեփոխումների պլանավորումը և իրագործումը:

Այդ բարեփոխումները կնպատակաուղղվեն շուկայական տնտեսությանը բնորոշ սոցիալական պաշտպանվածության

մեթոդների զարգացմանը Հայաստանի Հանրապետությունում և կրնդգրկեն սոցիալական պաշտպանության բոլոր ձևերը:

#### Հոդված 61 Զբոսաշրջություն

Կողմերը կրնդլայնեն և կզարգացնեն իրենց համագործակցությունը, որը կներառի.

- օժանդակություն զբոսաշրջային առևտրի ոլորտում,
- տեղեկության հոսքի ընդարձակում,
- «նոու-հաու»-ի փոխանցում,
- համատեղ գործունեության հնարավորությունների ուսումնասիրություն,
- զբոսաշրջության պաշտոնական մարմինների միջև համագործակցություն,
- զբոսաշրջությունը զարգացնելու նպատակով վերապատրաստում:

#### Հոդված 62 Փոքր և միջին ձեռնարկություններ

Կողմերը կձգտեն ամրապնդել և զարգացնել փոքր և միջին ձեռնարկությունների /ՓԲԶ/ ու դրանց ասոցիացիաների միջև համագործակցությունը Հայաստանի Հանրապետությունում և Համագործակցությունում:

Համագործակցությունը ներառում է տեխնիկական օգնություն, մասնավորապես, հետևյալ ոլորտներում`

- ՓՄՁ-ի օրենսդրական դաշտի կատարելագործում,
- համապատասխան ենթակառուցվածքի զարգացումը (ՓԲԶ-ին օժանդակող գործակալություն) հաղորդակցություն, աջակցություն ՓՄՁ-ի հիմնադրամի ստեղծման գործին,
- տեխնոլոգիաների հավաքակայանների ստեղծում:

#### Հոդված 63 Տեղեկատվություն և հաղորդակցություն

Կողմերը կնպաստեն տեղեկության ստացման ժամանակակից մեթոդների, ներառյալ` միջոցների զարգացմանը, և կկարգավորեն տեղեկության արդյունավետ փոխանակումը:

Նախապատվությունը կտրվի այն ծրագրերին, որոնք նպատակաուղղված են հասարակության լայն շրջաններին` Համագործակցության և Հայաստանի Հանրապետության մասին հիմնավոր տեղեկատվություն ապահովելուն, հնարավորության

դեպքում, նաև տվյալների բազայի մատչելիությունը՝ հաշվի առնելով մտավոր սեփականության իրավունքները:

#### Հոդված 64 Սպառողների պաշտպանությունը

Կողմերը սերտորեն կհամագործակցեն իրենց սպառողների պաշտպանության համակարգերի համատեղելիությանը հասնելու նպատակով: Այդ համագործակցությունը կարող է ներառել օրենսդրական աշխատանքի և կառուցվածքային բարեփոխումների մասին տեղեկության փոխանակում, վտանգավոր արդյունքների մասին փոխադարձ իրազեկման մշտական համակարգերի ստեղծում, սպառողներին տրամադրվող տեղեկության կատարելագործում, հատկապես ապրանքների գների, արտադրանքի և ծառայությունների բնութագրերի մասին, սպառողների շահագրգիռ ներկայացուցիչների փոխանակում, սպառողների պաշտպանության քաղաքականությունների համատեղելիության սերտաձում, դասընթացների և մասնագիտական վերապատրաստումների կազմակերպում:

#### Հոդված 65 Մաքսային ոլորտ

1. Սույն համագործակցության նպատակն է երաշխավորել առևտրի և տոնավաճառների կապակցությամբ ընդունվելիք դրույթների համապատասխանությունը և հասնել Հայաստանի Հանրապետության և Համագործակցության մաքսային համակարգերի մերձեցման:

2. Համագործակցությունը, մասնավորապես, կընդգրկի.

- տեղեկության փոխանակում,
- աշխատանքի մեթոդների կատարելագործում,
- Համակցված անվանացանկի և եզակի վարչական փաստաթղթի ընդունում,
- Համագործակցության և Հայաստանի Հանրապետության տարանցիկ համակարգերի միջև փոխկապակցվածության ապահովում,
- բեռնափոխադրումների հետ կապված ստուգումների և ձևականությունների պարզեցում,
- օժանդակություն ժամանակակից մաքսային տեղեկատվական համակարգերի ներդրման գործին,
- սեմինարների և ուսումնական ծրագրերի կազմակերպում:  
Անհրաժեշտության դեպքում կցուցաբերվի տեխնիկական օգնություն:

3. Չհակասելով սույն Համաձայնագրով նախատեսվող հետագա համագործակցությանը և, մասնավորապես, 69-րդ և 71-րդ հոդվածներին, փոխօգնությունը վարչական մամինների միջև կիրականացվի սույն Համաձայնագրին կից Արձանագրության դրույթներին համապատասխան:

#### Հոդված 66

#### Վիճակագրական համագործակցություն

Համագործակցությունն այս բնագավառում կնպաստակաուղղվի արդյունավետ վիճակագրական համակարգի զարգացմանը, որը կոչված է ապահովելու տնտեսական բարեփոխումների առաջընթացին օժանդակություն և այն դիտարկելու համար անհրաժեշտ հավաստի վիճակագրություն ապահովելուն, ինչպես նաև նպաստելու Հայաստանի Հանրապետությունում մասնավոր ձեռնարկատիրության զարգացմանը:

Կողմերը մասնավորապես կհամագործակցեն հետևյալ ուղղություններով՝

- Հայաստանի վիճակագրական համակարգի համապատասխանեցում միջազգային մեթոդներին, ստանդարտներին և դասակարգմանը,

- վիճակագրական տեղեկության փոխանակում,

- տնտեսական բարեփոխումների կառավարման և իրագործման համար անհրաժեշտ մակրո և միկրո վիճակագրական տեղեկատվության ապահովում:

Այս առումով Համագործակցությունը կօժանդակի Հայաստանի Հանրապետությանը՝ տրամադրելով տեխնիկական օգնություն:

#### Հոդված 67

#### Տնտեսագիտություն

Կողմերը կնպաստեն իրենց տնտեսական համակարգերի, տնտեսական բարեփոխումների և տնտեսական քաղաքականությունների համակարգման գործընթացներին՝ համագործակցելով իրենց տնտեսական համակարգերի հիմքերի, շուկայական տնտեսության պայմաններում՝ տնտեսական քաղաքականության մշակման և իրագործման հարցերում փոխընթացման գալու նպատակով: Այդպիսով Կողմերը կփոխանակեն տեղեկություն գերտնտեսության կատարման և հեռանկարների վերաբերյալ:

Համագործակցությունը տեխնիկական օգնություն կտրամադրի.

- տնտեսական բարեփոխումների գործընթացում աջակցել Հայաստանի Հանրապետությանը՝ փորձագիտական,



խորհրդատվական և տեխնիկական օգնություն տրամադրելու ճանապարհով,

- խրախուսել համագործակցությունը տնտեսագետների միջև՝ արագացնելու համար տեղեկության և «նոու-հաու»-ի փոխանցումը տնտեսական քաղաքականության մշակման նպատակով, ինչպես նաև տնտեսական քաղաքականության բնագավառում կատարված հետազոտությունների արդյունքները լայնորեն տարածելու նպատակով:

#### Բաժին 7

Համագործակցություն ժողովրդավարության և մարդու իրավունքներին առնչվող հարցերի շուրջ

#### Հոդված 68

Կողմերը կհամագործակցեն ժողովրդավարական կառույցների ստեղծմանը կամ ամրապնդմանն առնչվող բոլոր հարցերում, ներառյալ այն հարցերը, որոնք անհրաժեշտ են ամրապնդելու օրենսդրական կառավարումը և մարդու իրավունքների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի նորմերին և ԵԱՀԿ-ի սկզբունքներին համապատասխան:

Այս համագործակցությունը կդրսևորվի տեխնիկական օժանդակության ծրագրերի ձևով և ուղղված կլինի օգնելու, ի թիվս այլոց, համապատասխան օրենսդրության և կանոնակարգերի նախագծմանը, նման օրենսդրության կիրառմանը, դատավորների գործունեությանը, արդարադատության հարցերում պետության դերին և ընտրական համակարգի գործարկմանը: Դրանք, անհրաժեշտության դեպքում, կարող են ընդգրկել նաև վերապատրաստական դասընթացներ: Կողմերը կխրախուսեն իրենց ազգային, տարածքային և դատական մարմինների, խորհրդարանականների և ոչ կառավարական կազմակերպությունների միջև կապերն ու փոխանակումները:

#### Բաժին 8

Համագործակցություն ապօրինի գործունեությունների կանխման և անօրինական ներգաղթի կանխարգելման ու վերահսկման բնագավառում

#### Հոդված 69

Կողմերը կհամագործակցեն ապօրինի գործողությունները կանխելու նպատակով: Դրանք են՝

- տնտեսական բնույթի օրինախախտումները, ներառյալ կաշառակերությունը,
- տարբեր ապրանքներով, ներառյալ արտադրական թափոններով կատարվող ապօրինի գործարքները,
- կեղծարարությունը:
  - Վերը նշված բնագավառներում համագործակցությունը կհիմնվի փոխադարձ քննարկումների և սերտ կապի վրա: Տեխնիկական և վարչական օգնություն կտրամադրվի՝
    - ապօրինի գործողությունների կանխմանն ուղղված ազգային օրինագծերի պատրաստման համար,
    - տեղեկատվական կենտրոնների ստեղծման համար,
    - օրինապահ մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացման համար,
    - անձնակազմի վերապատրաստման և հետազոտական ենթակառուցների զարգացման համար,
    - ապօրինի գործողությունների կանխարգելմանն ուղղված երկուստեք ընդունելի միջոցառումների մշակման գործընթացների համար:

Հոդված 70  
Փողերի լվացում

1. Կողմերը համաձայնում են ջանքեր գործադրելու և համագործակցելու անհրաժեշտությունը, եկամուտների լվացման հանցագործ գործունեության մեջ իրենց ֆինանսական համակարգերի օգտագործումը կանխարգելելու նպատակով, ընդհանուր առմամբ, և, մասնավորապես, թմրանյութերի հետ կապված օրինազանցություններում:

2. Համագործակցությունն այս բնագավառում ներառում է վարչական և տեխնիկական օժանդակությունը՝ ուղղված փողերի «լվացումը» կանխարգելող այնպիսի ընդունելի ստանդարտների մշակմանը, որոնք համարժեք են Համագործակցության և այս բնագավառում միջազգային վեհաժողովների կողմից տվյալ հարցի շուրջ ընդունված ստանդարտներին, ներառյալ ֆինանսական գործունեության աշխատանքային խումբը /ՖԳԱԽ/:

Հոդված 71  
Թմրանյութեր

Իրենց լիազորությունների և իրավասությունների շրջանակներում Կողմերը կհամագործակցեն թմրանյութերի և հոգեմեդիկամենտային նյութերի ապօրինի արտադրության, մատակարարման և առևտրի դեմ տարվող պայքարի

քաղաքականության և միջոցառումների արդյունավետության, ներառյալ՝ դրանք պարունակող դեղատոմսային նշանակության քիմիական հիմքերի տարածման կանխարգելման, ինչպես նաև թմրանյութերի օգտագործման կրճատման և կանխարգելման նպատակով: Նշված բնագավառում համագործակցությունը կհիմնվի փոխադարձ խորհրդակցությունների և սերտ համակարգման վրա՝ Կողմերի միջև թմրամիջոցներին առնչվող բնագավառների նպատակների և միջոցների վերաբերյալ:

## Հոդված 72 Ապօրինի ներգաղթ

1. Եվրամիության անդամ պետություններն ու Հայաստանի Հանրապետությունը համաձայնում են համագործակցել ապօրինի ներգաղթը կանխելու և հսկելու նպատակով: Ուստի՝

- Հայաստանի Հանրապետությունը համաձայնում է հետ ընդունել Անդամ պետությունների տարածքում անօրինականորեն գտնվող իր քաղաքացիներին՝ տվյալ երկրի պահանջի համաձայն և առանց լրացուցիչ ձևականությունների,

- յուրաքանչյուր անդամ պետություն, ընդհանուր նպատակներից ելնելով, համաձայն է հետ ընդունել իր համաքաղաքացուն, որն ապօրինաբար գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում՝ վերջինիս պահանջի համաձայն և առանց ձևականությունների:

Անդամ պետությունները և Հայաստանի Հանրապետությունը տվյալ նպատակների համար իրենց քաղաքացիներին կապահովեն համապատասխան նույնական փաստաթղթերով:

2. Հայաստանի Հանրապետությունը համաձայնում է երկկողմ պայմանագրեր կնքել Անդամ պետությունների հետ, որոնցով կկարգավորվեն փոխադարձ պարտավորությունները, այդ թվում նաև այլ երկրների քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող այն անձանց հետ ընդունելու առումով, որոնք ժամանել են անդամ պետություն Հայաստանի Հանրապետությունից կամ հակառակը:

3. Համագործակցության խորհուրդը կքննարկի նաև ապօրինի ներգաղթի կանխարգելմանն ու վերահսկմանն ուղղված լրացուցիչ համատեղ ջանքերի գործադրման հարցը:

## Բաժին 9 Մշակութային համագործակցություն

### Հոդված 73

Կողմերը կխթանեն, կխրախուսեն և կնպաստեն մշակութային համագործակցությանը: Անհրաժեշտության դեպքում Համագործակցության կամ մեկ, կամ ավելի անդամ պետությունների մշակութային համագործակցության ծրագրերը կարող են հիմք հանդիսանալ համագործակցության համար և կարող են զարգացնել փոխադարձ հետաքրքրություն և ներկայացնող հետազա գործողությունները:

#### Բաժին 10

Ֆինանսական համագործակցություն տեխնիկական օգնության բնագավառում

#### Հոդված 74

Սույն Համաձայնագրի նպատակներն իրագործելու համար և, համաձայն 75-րդ, 76-րդ և 77-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետությունը կօգտվի Համագործակցության ժամանակավոր ֆինանսական աջակցությունից, որը նվիրատվության ձևով կտրամադրվի որպես տեխնիկական օգնություն: Այս օգնության նպատակը կլինի Հայաստանի Հանրապետության տնտեսական վերափոխման գործընթացի արագացումը:

#### Հոդված 75

Այդ ֆինանսական աջակցությունը կիրականացվի «Tacis» ծրագրի շրջանակներում, ինչպես նախատեսված է Համագործակցության համապատասխան խորհրդի կանոնակարգում:

#### Հոդված 76

Համագործակցության ֆինանսական աջակցության ոլորտները և նպատակները կամրագրվեն համապատասխան ծրագրում, որը կարտացույցի երկու կողմերի միջև համաձայնեցման ենթակա սահմանվող առաջնահերթությունները՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կարիքները, ոլորտների ծավալային տարողունակությունը և բարեփոխումների գործընթացը: Կողմերն այդ մասին կտեղեկացնեն Համագործակցության խորհրդին:

#### Հոդված 77

Առկա ռեսուրսների օպտիմալ օգտագործման նպատակով Կողմերը կերաշխավորեն Համագործակցության տեխնիկական

օժանդակության իրագործում՝ աջակցության այլ աղբյուրների հետ համապարփակ համակարգման ձևով, ինչպիսիք են Անդամ պետությունները, այլ պետությունները և միջազգային կազմակերպությունները, որոնցից են Վերակառուցման և զարգացման համաշխարհային բանկը և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը:

#### Բաժին 11

Կառուցվածքային, ընդհանուր և եզրափակիչ դրույթներ

#### Հոդված 78

Սույնով հիմնվում է Համագործակցության խորհուրդ, որը հսկողություն կիրականացնի սույն Համաձայնագրի կիրառման նկատմամբ: Այն կգումարվի տարին մեկ անգամ՝ նախարարների մակարդակով: Այն կքննարկի սույն Համաձայնագրի շրջանակներում ծագող բոլոր հիմնական հարցերը, ինչպես նաև սույն Համաձայնագրի նպատակներին հասնելու համար, վերջինիս շրջանակներում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ցանկացած այլ երկկողմ կամ միջազգային հարց: Համագործակցության խորհուրդը կարող է նաև հանձնարարականներ տալ երկու Կողմերի միջև համաձայնության միջոցով:

#### Հոդված 79

1. Համագործակցության խորհուրդը բաղկացած կլինի Եվրամիության ու Եվրոպական համայնքի հանձնաժողովի անդամներից, մի կողմից, և Հայաստանի Հանրապետության կառավարության անդամներից, մյուս կողմից:

2. Համագործակցության խորհուրդը կհաստատի ընթացակարգի իր կանոնները:

3. Համագործակցության խորհրդի նախագահունը հերթականությամբ իրականացվում է Համագործակցության ներկայացուցչի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության անդամի կողմից:

#### Հոդված 80

1. Համագործակցության խորհուրդը իր գործունեության ընթացքում կհամագործակցի Համագործակցության Կոմիտեի հետ, որը կազմված կլինի մի կողմից՝ Եվրամիության խորհրդի ու Եվրոպական համայնքի Հանձնաժողովի անդամներից և Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչներից՝ մյուս

կողմից: Համագործակցության խորհրդի նախագահունը կիրականացվի հերթականությամբ՝ Համագործակցության և Հայաստանի Հանրապետության կողմից:

Համագործակցության խորհրդի ընթացակարգի կանոններով կսահմանվեն Համագործակցության Կոմիտեի պարտականությունները, որոնք կներառեն Համագործակցության խորհրդի նիստերի գումարման նախապատրաստումը և Կոմիտեի գործելակարգը:

2. Համագործակցության խորհուրդը կարող է իր ցանկացած իրավասությունը փոխանցել Համագործակցության կոմիտեին, որը կերաշխավորի Համագործակցության խորհրդի նիստերի հաջորդականությունը:

#### Հոդված 81

Համագործակցության խորհուրդը կարող է որոշում կայացնել որևէ այլ հատուկ կոմիտեի կամ մարմնի ստեղծման մասին, որը կօժանդակի վերջինիս՝ իր պարտավորությունների կատարման ընթացքում և կորոշի այդպիսի կոմիտեիների կամ մարմինների կազմն ու պարտականությունները, ինչպես նաև դրանց գործելակարգը:

#### Հոդված 82

Սույն Համաձայնագրի շրջանակներում ծագած ցանկացած հարցի քննարկման ընթացքում, որը վկայակոչում է ԱՍԳՀ/ԱՀԿ-ի որևէ հոդված, Համագործակցության խորհուրդը հաշվի կառնի ԱՍԳՀ/ԱՀԿ-ի տվյալ հոդվածին տրված հնարավորին չափ ծավալուն մեկնաբանությունը՝ ԱՀԿ-ի անդամների տված հարցում:

#### Հոդված 83

Սույնով հաստատվում է Խորհրդարանական համագործակցության կոմիտե: Այն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Եվրախորհրդարանի անդամների համաժողով է, որի նպատակն է տեսակետների փոխանակումը: Կոմիտեն ինքն է որոշում իր նիստերի գումարման ժամկետների պարբերականությունը:

#### Հոդված 84

1. Խորհրդարանական համագործակցության կոմիտեն բաղկացած կլինի մի կողմից՝ Եվրախորհրդարանի և մյուս կողմից՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի անդամներից:

2. Խորհրդարանական համագործակցության կոմիտեն հաստատում է ընթացակարգի իր կանոնները:

3. Խորհրդարանական համագործակցության կոմիտեում նախագահուճը հաջորդաբար կիրականացվի համապատասխանաբար Եվրախորհրդարանի և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ներկայացուցիչների կողմից՝ համաձայն Խորհրդարանական համագործակցության կոմիտեի գործելակերպի կանոններում սահմանված դրույթների:

#### Հոդված 85

Խորհրդարանական համագործակցության կոմիտեն Համագործակցության խորհրդից հարցման կարգով կարող է պահանջել համապատասխան տեղեկություն՝ Համաձայնագրի կիրառման վերաբերյալ, և վերջինս պետք է տրամադրի կոմիտեին պահանջվող տեղեկությունը:

Խորհրդարանական համագործակցության կոմիտեն կտեղեկացվի Համագործակցության խորհրդի հանձնարարականների մասին:

Խորհրդարանական համագործակցության կոմիտեն կարող է հանձնարարականներ տալ Համագործակցության խորհրդին:

#### Հոդված 86

1. Սույն Համաձայնագրի շրջանակներում Կողմերից յուրաքանչյուրը երաշխավորում է, որ մյուս Կողմի ֆիզիկական և իրավաբանական անձանց համար կապահովվի սեփական անձանց նկատմամբ խտրականության բացառում Կողմի իրավասու դատարաններում և վարչական մարմիններում՝ անձի և սեփականության իրավունքները, ներառյալ մտավոր, արդյունաբերական և առևտրային սեփականությունը պաշտպանելու համար:

2. Իրենց համապատասխան լիազորությունների և իրավասությունների շրջանակներում Կողմերը.

- խրախուսում են վեճերի լուծուճը արբիտրաժի միջոցով, որոնք կարող են ծագել Հայաստանի Հանրապետության և Համագործակցության տնտեսավարող սուբյեկտների միջև՝ կնքված առևտրային և համագործակցության գործարքների կապակցությամբ,

- համաձայնում են, որ երբ վեճը ներկայացվում է միջնորդ դատարան, վեճի յուրքանչյուր կողմ կարող է ընտրել միջնորդ դատավորին, անկախ ազգությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ Կողմերի ընտրած միջնորդ դատարանի մասին կանոնները այլ կերպ չեն նախատեսում և, որ նախագահող երրորդ միջնորդ

դատավորը կամ դատավորներից մեկը լինի երրորդ երկրի քաղաքացի,

- կհանձնարարեն իրենց տնտեսվարող սուբյեկտներին՝ փոխհամաձայնության հիման վրա ընտրել իրենց պայմանագրերի համար կիրառելի օրենքներ,

- կխրախուսեն Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային առևտրական իրավունքի հանձնաժողովի «UNCITRAL» կողմից մշակված միջնորդ դատարանի մասին կանոնների կիրարկումը 1958թ. հունիսի 10-ին Նյու Յորքում ընդունված Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին Կոնվենցիայի մասնակից պետության ցանկացած կենտրոնի միջոցով արբիտրաժային ընթացակարգը:

### Հոդված 87

Սույն Համաձայնագրում ոչինչ չի խոչընդոտում Կողմերին ձեռք առնել միջոցներ.

ա) որոնք նա համարում է անհրաժեշտ՝ կանխելու տեղեկատվության բացահայտումը, որը կհակասի իր անվտանգության էական շահերին,

բ) որոնք վերաբերում են զենքի, զինամթերքի կամ ռազմական միջոցների արտադրությանը կամ առևտրին, պաշտպանական նպատակների համար անհրաժեշտ հետազոտություններին, կատարելագործմանը կամ արտադրությանը, պայմանով, որ այդ միջոցները չեն վատթարացնի մրցակցության պայմանները, որոնք առնչվում են հատուկ ռազմական նպատակների համար չնախատեսված արտադրանքներին,

գ) որոնք նա կարևոր է համարում իր անվտանգության համար՝ օրենքի և կարգի պահպանմանը սպառնացող ներքին լուրջ տարածայնությունների, պատերազմի կամ լուրջ միջազգային լարվածությունների սրման դեպքում, որոնք կարող են պատերազմի պատճառ դառնալ կամ խաղաղության և միջազգային անվտանգության պահպանման ուղղությամբ իր ստանձնած պարտավորությունները կատարելու համար,

դ) որոնք նա անհրաժեշտ է համարում իր միջազգային պարտավորությունների կատարման և արդյունաբերական ապրանքների ու տեխնոլոգիաների համատեղ օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար:

### Հոդված 88

1. Սույն Համաձայնագրում ընդգրկված ոլորտներում և առանց վնասելու դրանում որևէ հատուկ դրույթ՝



- Հայաստանի Հանրապետության կողմից Համագործակցության նկատմամբ կիրառվող միջոցառումները կբացառեն ցանկացած խտրականություն Անդամ պետությունների, դրանց քաղաքացիների կամ ընկերությունների ու ֆիրմաների միջև,

- Համագործակցության կողմից Հայաստանի Հանրապետության նկատմամբ կիրառվող միջոցառումները կբացառեն ցանկացած խտրականություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամ դրա ընկերությունների ու ֆիրմաների միջև:

2. 1-ին կետի դրույթները չեն հակասում Կողմերի իրավունքին՝ կիրառելու իրենց բյուջետային օրենսդրության համապատասխան դրույթները ոչ համարժեք պայմաններում գտնվող հարկատուների նկատմամբ՝ նկատի ունենալով նրանց բնակության վայրը:

#### Հոդված 89

1. Կողմերից յուրաքանչյուրը կարող է դիմել Համագործակցության խորհրդին սույն Համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման կապակցությամբ ծագած ցանկացած վեճի կապակցությամբ:

2. Համագործակցության խորհուրդը տարաձայնությունները կարող է լուծել հանձնարարականների միջոցով:

3. Եթե հնարավոր չէ տարաձայնությունները լուծել 2-րդ կետի համաձայն, ապա Կողմերից յուրաքանչյուրը կարող է ծանուցել մյուս Կողմին իր միջնորդ դատավորի նշանակման մասին, իսկ մյուս Կողմը պետք է երկու ամսվա ընթացքում նշանակի երկրորդ միջնորդ դատավորին: Սույն գործընթացում Համագործակցությունը և Անդամ պետությունները կհամարվեն վեճի մի Կողմ: Համագործակցության խորհուրդը կնշանակի երրորդ միջնորդ դատավորին:

Միջնորդ դատավորների հանձնարարականները պետք է ընդունվեն ձայների մեծամասնությամբ: Այդ հանձնարարականները չպետք է կրեն Կողմերի կողմից պարտադրվող բնույթ:

4. Համագործակցության խորհուրդը կարող է հաստատել վեճերի լուծման ընթացակարգի կանոնները:

#### Հոդված 90

Կողմերը համաձայն են համապատասխան ուղիներով անհապաղ խորհրդակցել Կողմերից յուրաքանչյուրի խնդրանքով՝ սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված ցանկացած հարցի և Կողմերի միջև հարաբերություններին առնչվող այլ հարցերի քննարկման վերաբերյալ:

Սույն հոդվածի դրույթները ոչ մի ձևով չեն ազդի և չեն հակասի 14-րդ, 89-րդ և 95-րդ հոդվածներին:

#### Հոդված 91

Սույն Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող ռեժիմը ոչ մի դեպքում չպետք է ավելի բարենպաստ լինի, քան այն, որը տրամադրում են Անդամ պետությունները միմյանց:

#### Հոդված 92

Սույն Համաձայնագրի նպատակների համար «Կողմեր» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետությունը՝ մի կողմից, և Համագործակցությունը կամ Անդամ պետությունները, կամ Համագործակցությունը և անդամ պետությունները իրենց համապատասխան իրավասություններով՝ մյուս կողմից:

#### Հոդված 93

Այնքանով որքանով, որ սույն Համաձայնագրում ընդգրկված հարցերը շոշափվում են նաև էներգետիկ խարտիայի Պայմանագրում և դրա Արձանագրություններում, այդ Պայմանագիրը և Արձանագրությունները ուժի մեջ մտնելուց հետո կկիրառվեն նման հարցերի նկատմամբ, բայց միայն այն չափով, որքանով, որ նման կիրառումը նախատեսվում է դրանցում:

#### Հոդված 94

Սույն Համաձայնագիրը կնքված է 10 տարի նախնական ժամկետով: Դրա գործողության ժամկետը ինքնաբերաբար կերկարաձգվի ամեն տարի, քանի դեռ Կողմերից որևէ մեկը դրա ժամկետը լրանալուց 6 ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չի տեղեկացնի սույն Համաձայնագիրը դադարեցնելու իր մտադրության մասին:

#### Հոդված 95

1. Կողմերը ձեռք կառնեն ընդհանուր կամ առանձնահատուկ միջոցներ, որոնք անհրաժեշտ են Համաձայնագրում նշված պարտավորությունների կատարման համար: Նրանք պետք է հետևեն Համաձայնագրում նշված նպատակների կատարմանը:

2. Եթե Կողմերից մեկը գտնում է, որ մյուս Կողմը թերանում է սույն Համաձայնագրով նախատեսված պարտավորությունների կատարման հարցում, ապա նա կարող է ձեռք առնել համապատասխան միջոցներ: Մինչ այդ, բացառությամբ հատուկ դեպքերի, նա պետք է Համագործակցության խորհրդին ներկայացնի գործին առնչվող ամբողջ տեղեկությունը, որն անհրաժեշտ է իրավիճակը պարզաբանելու համար՝ Կողմերի համար ընդունելի լուծում գտնելու նպատակով:

Այդ միջոցներն ընտրելիս նախապատվությունը պետք է տրվի նրանց, որոնք ամենաքիչն են խախտում սույն Համաձայնագրի կիրառումը: Նման միջոցների մասին անհապաղ պետք է տեղյակ պահել Համագործակցության խորհրդին՝ մյուս Կողմի պահանջով:

#### Հոդված 96

1-րդ, 2-րդ, 3-րդ և 4-րդ Հավելվածները Արձանագրության հետ միասին կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

#### Հոդված 97

Սույն Համաձայնագիրն, այնքան ժամանակ, քանի դեռ նրանում նշված համապատասխան իրավունքները ձեռք չեն բերվել ֆիզիկական անձանց և տնտեսվարող սուբյեկտների կողմից, չի խախտում այն իրավունքները, որոնք վերջիններս ունեն ըստ, մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության և, մյուս կողմից՝ մեկ կամ ավել Անդամ պետությունների միջև գործող համաձայնագրերի, բացառությամբ Համագործակցության իրավասության տակ ընկնող ոլորտների և առանց վնասելու Անդամ պետությունների պարտավորությունները, որոնք բխում են սույն Համաձայնագրից՝ իրենց իրավասության տակ ընկնող ոլորտներում:

#### Հոդված 98

Սույն Համաձայնագիրը կկիրառվի այն տարածաշրջաններում, որտեղ գտնվում են Եվրահամայնքի, Եվրոպական ածխի ու պողպատի համագործակցության և Եվրոպական ատոմային էներգիայի համագործակցության ստեղծման մասին Պայմանագրերը՝ այդ Պայմանագրերում սահմանված պայմաններով, մի կողմից, և Հայաստանի Հանրապետության տարածքում, մյուս կողմից:

#### Հոդված 99

Սույն Համաձայնագիրն ի պահ կտրվի Եվրամիության խորհրդի  
Գլխավոր քարտուղարին:

#### Հոդված 100

Սույն Համաձայնագրի բնօրինակները՝ հայերեն, դանիերեն,  
հոլանդերեն, անգլերեն, ֆիններեն, ֆրանսերեն, գերմաներեն,  
հունարեն, իտալերեն, պորտուգալերեն, իսպաներեն և շվեդերեն, ի  
պահ կտրվեն Եվրամիության խորհրդի Գլխավոր քարտուղարին:

#### Հոդված 101

Կողմերը կհաստատեն սույն Համաձայնագիրը՝ իրենց  
ընթացակարգերին համապատասխան:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում երկրորդ ամսվա  
առաջին օրը՝ այն օրվանից, երբ Կողմերը Եվրամիության խորհրդի  
Գլխավոր քարտուղարին կտեղեկացնեն 1-ին պարբերությունում  
նշված ընթացակարգերի ավարտի մասին:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո, այնքանով,  
որ կհաստատվեն հարաբերություններ Հայաստանի  
Հանրապետության և Համագործակցության միջև, այն կփոխարինի  
1989թ. դեկտեմբերի 18-ին Բոյուսելում կնքված Եվրոպական  
տնտեսական համագործակցության, Եվրոպական ատոմային  
էներգիայի համագործակցության և Խորհրդային Սոցիալիստական  
Հանրապետությունների միջև կնքված առևտրական, տնտեսական և  
առևտրային համագործակցության մասին Համաձայնագիրը:

#### Հոդված 102

Քանի դեռ չեն ավարտվել սույն Համաձայնագիրն ուժի մեջ  
մտնելու համար անհրաժեշտ ընթացակարգերը, սույն  
Համաձայնագրի որոշակի բաժինների դրույթները կգործեն  
Համագործակցության և Հայաստանի Հանրապետության միջև  
ժամանակավոր Համաձայնագրի միջոցով, և այդ դեպքում,  
Պայմանավորվող կողմերը համաձայնում են, որ «սույն  
Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը» տերմինը կնշանակի նման  
ժամանակավոր Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:

Կատարված է Լյուքսեմբուրգ քաղաքում 1996 թվականի  
ապրիլի 22-ին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1999 թվականի հուլիսի 1-ից:

## Կից ներկայացվող փաստաթղթերի ցանկ

Հավելված 1. Հայաստանի Հանրապետության կողմից 9-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն Անկախ պետություններին տրվող առավելությունները:

Հավելված 2. 42-րդ հոդվածում նշված մտավոր, արդյունաբերական և առևտրային սեփականության մասին Կոնվենցիաները:

Հավելված 3. 26-րդ հոդվածի 3-րդ կետում նշված ֆինանսական ծառայությունները:

Հավելված 4. 23-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն Համայնքի կողմից արվող վերապահումները:

Մաքսային հարցերով վարչական մարմինների միջև փոխօգնության մասին արձանագրություն:

## Հավելված 1

Հայաստանի Հանրապետության կողմից 9-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն Անկախ պետություններին տրվող առավելությունները

Բոլոր Անկախ պետությունները ոչ մի տեսակի մաքսատուրք չեն կիրառում:

## Հավելված 2

42-րդ հոդվածում նշված մտավոր, արդյունաբերական և առևտրային սեփականության մասին Կոնվենցիաները

1. 42-րդ հոդվածի 2-րդ կետը վերաբերում է հետևյալ բազմակողմ կոնվենցիաներին՝

- Գրական և գեղարվեստական ստեղծագործությունների պաշտպանության մասին Բեռնի Կոնվենցիա (Փարիզյան ակտ, 1971թ.),

- Կատարողների, տեսաձայնագրման պրոդյուսերների և ռադիոհեռարձակման կազմակերպությունների պաշտպանության միջազգային Կոնվենցիա (Հռոմ 1961թ.),

- Մակնիշների միջազգային գրանցման մասին Մադրիդի Համաձայնագրին կից Արձանագրություն (Մադրիդ, 1989թ.),

- Մակնիշների գրանցման նպատակով ապրանքների և ծառայությունների միջազգային դասակարգման վերաբերյալ Նիցայի Համաձայնագիր (Ժնև, 1977թ., լրացումները՝ 1979թ.),

- Պատենտավորման նպատակով միկրոօրգանիզմների դեպոզիտի միջազգային ճանաչման վերաբերյալ Բուդապեշտի Պայմանագիր (1977թ., փոփոխված 1980թ.),

- Բույսերի նոր տարատեսակների պաշտպանության «UPOV» միջազգային Կոնվենցիա (Ժնևյան ակտ, 1991թ.):

2. Համագործակցության խորհուրդը կարող է երաշխավորել, որ 42-րդ հոդվածի 2-րդ կետը կկիրառվի այլ բազմակողմ կոնվենցիաների համար: Այն դեպքում, երբ առևտրի պայմանների վրա ազդող մտավոր, արդյունաբերական և առևտրային սեփականության բնագավառում կարող են առաջանալ

հիմնախնդիրներ, ապա որևէ Կողմի պահանջով անհապաղ կկազմակերպվեն քննարկումներ՝ երկուստեք բավարարող լուծումներ գտնելու նպատակով:

3. Կողմերը հաստատում են հետևյալ բազմակողմ կոնվենցիաներից բխող պարտավորությունների ստանձնման անհրաժեշտությունը՝

- Արդյունաբերական սեփականության պաշտպանության Փարիզի Կոնվենցիա (Ստոկհոլմյան ակտ, 1967թ., լրացումներով՝ 1979թ.),

- Մակնիշների միջազգային գրանցման վերաբերյալ Մադրիդի Համաձայնագիրը (Ստոկհոլմյան ակտ, 1967թ., լրացումներով՝ 1979թ.),

- Պատենտային համագործակցության Պայմանագիրը (Վաշինգտոն, 1970թ., լրացումները՝ 1979թ. և փոփոխությունները՝ 1984թ.):

4. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետությունը մտավոր, արդյունաբերական և առևտրային սեփականության ճանաչման և պաշտպանության հարցում Համայնքի ընկերությունների և քաղաքացիների նկատմամբ կապահովի ոչ պակաս բարենպաստ վերաբերմունք, քան այն, որ շնորհվում է որևէ երրորդ երկրի՝ երկկողմ համաձայնագրերով:

5. 4-րդ կետի դրույթները չեն կիրառվում այն առավելությունների նկատմամբ, որոնք Հայաստանի Հանրապետությունը փոխադարձ արդյունավետության հիման վրա շնորհել է որևէ երրորդ երկրի և այն առավելությունների նկատմամբ, որոնք Հայաստանի Հանրապետությունը շնորհել է նախկին ԽՍՀՄ-ի որևէ այլ երկրի:

### Հավելված 3

26-րդ հոդվածի 3-րդ կետում նշված ֆինանսական ծառայություններ

Ֆինանսական ծառայության տակ հասկացվում է ֆինանսական բնույթի ցանկացած ծառայություն, որը ներկայացվում է Կողմերից մեկի ֆինանսական ծառայություն մատուցողի կողմից: Ֆինանսական ծառայությունները ներառում են գործունեության հետևյալ ձևերը.

Ա. ապահովագրական և ապահովագրությանն առնչվող բոլոր ծառայությունները,

1. ուղղակի ապահովագրություն /ներառյալ համատեղ ապահովագրությունը/,

ա) կյանքի,

բ) այլ:

2. Վերաապահովագրում և իրավունքների հետհանձնում:

3. Ապահովագրական միջնորդություն, ինչպես օրինակ՝ բրոքերային կամ միջնորդային գործառնությունները:

4. Ապահովագրության հետ կապված օժանդակ ծառայություններ, ինչպիսիք են խորհրդատվական, ապահովագրական գործին առնչվող, ռիսկի գնահատման և բողոքների լուծման ծառայությունները:

Բ. Բանկային և այլ ֆինանսական ծառայություններ (բացի ապահովագրությունից):

1. Բնակչությունից ավանդների և այլ վերադարձելի միջոցների ընդունումը:

2. Բոլոր տեսակների վարկավորումը, ներառյալ, ի թիվս այլոց, սպառողական վարկը, գրավային վարկը, ֆակտորինգը և առևտրային գործարքների ֆինանսավորումը:

3. Ֆինանսական լիզինգ:

4. Վճարումների և փողի փոխանցման բոլոր տեսակի ծառայությունները, ներառյալ վարկային և դեբետորական կտրոններ, ձամփորդական վճարագրեր և բանկային պարտամուրհակներ:

5. Երաշխիքներ և պարտավորություններ:

6. Իր կամ հաճախորդի հաշվին առևտրական գործառնությունների իրականացում արժությալին բորսայում, արժեթղթերի արտաբորսայական շուկայում կամ այլ գործառնություններ, կապված՝

ա) դրամաշուկայում շրջանառվող վճարագրերի, պարտամուրհակների, ավանդային հավաստագրերի և այլնի հետ,

բ) տարադրամի հետ,

գ) ածանցյալ արդյունքների, ներառյալ, բայց ոչ բացառապես, ժամկետային պայմանագրերի ու օպցիոնների հետ,

դ) փոխարժեքների և տոկոսադրույքների փոփոխման լծակների, ներառյալ այնպիսի արդյունքների հետ, ինչպիսիք են սվոպները, ֆորվարդային գործարքները և այլն,

ե) փոխանցելի արժեթղթերի հետ,

զ) այլ շրջանառու փաստաթղթերի և ֆինանսական ակտիվների, ներառյալ ոսկու և արծաթի ձուլակտորների հետ:

7. Մասնակցություն բոլոր տեսակի արժեթղթերի թողարկմանը, ներառյալ դրանց երաշխավորված գետեղումը շուկայում և ներդրումը՝ որպես գործակալ (բաց կամ փակ բաժանորդագրությամբ) և նման թողարկման հետ կապված ծառայությունների մատուցում:

8. Բրոքերություն փողի շուկայում:

9. Ակտիվների կառավարում, ինչպես օրինակ՝ կանխիկ կամ պորտֆելային ներդրումներ, համատեղ ներդրումային ծրագրերի կառավարման բոլոր ձևերը, կենսաթոշակային ֆոնդերի



կառավարում, գանձատան պահպանություն և հանձնառության ծառայություններ:

10. Ֆինանսական ակտիվներով վճարումների և քլիրինգային հաշվարկների իրականացման ծառայություններ, ներառյալ արժեթղթերը, ածանցյալ արդյունքները և այլ շրջանառու փաստաթղթերը:

11. Խորհրդատվական միջնորդություն և այլ օժանդակ ֆինանսական ծառայություններ գործունեության բոլոր տեսակներում, որոնք նշված են վերոհիշյալ 1-ից 10-րդ կետերում, ներառյալ վարկերի գծով տեղեկատվական և վերլուծական նյութերը, հետազոտությունը և խորհրդատվությունը՝ ներդրումների և պորտֆելային ներդրումների շուրջ, վերջիններիս ձեռքբերումների, կորպորատիվ վերակառուցման և ստրատեգիական հարցերի վերաբերյալ խորհրդատվություն:

12. Ֆինանսական տվյալների տրամադրում և հաղորդում, ֆինանսական տվյալների վերամշակում և այլ ֆինանսական ծառայություններ մատուցողների կողմից համապատասխան ծրագրային ապահովության տրամադրում:

Ֆինանսական ծառայությունների սահմանումից բացառվում են գործունեության հետևյալ տեսակները՝

ա) գործառնություններ, որոնք իրականացնում են կենտրոնական բանկերը կամ ցանկացած այլ պետական հաստատությունները՝ դրամարկղային քաղաքականության և փոխանակման արժեքի բնագավառում տարվող քաղաքականություն վարելիս,

բ) կենտրոնական բանկերի, կառավարական մարմինների կամ գերատեսչությունների, կամ պետական հաստատությունների կողմից անցկացվող գործառնությունները, որոնք կատարվում են կառավարության հաշվին կամ կառավարության երաշխավորությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործառնությունները կարող են կատարվել ֆինանսական ծառայություններ մատուցողների կողմից՝ նման պետական հիմնարկների կամ մասնավոր հաստատությունների հետ մրցակցության հիման վրա,

գ) գործառնություններ, որոնք կազմում են սոցիալական ապահովագրության կամ կենսաթոշակային ծրագրերի օրենքով սահմանված համակարգի մի մասը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ գործունեությունները կարող են իրականացվել ֆինանսական ծառայություն մատակարարողների կողմից՝ մրցակցելով հասարակական կազմակերպությունների կամ մասնավոր հաստատությունների հետ:

23-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն Համայնքի կողմից արվող վերապահումները

Հանքարդյունաբերություն

Մի շարք Անդամ պետություններում կարող է պահանջվել համաձայնություն՝ հանքային հումքի արդյունահանման, տնօրինման իրավունքների վերաբերյալ՝ այն ընկերությունների համար, որոնք չեն վերահսկվում Համայնքի կողմից:

Ձկնորսություն

Կենսաբանական ռեսուրսների և ձկնորսական տարածքների յուրացումն ու օգտագործումը Համայնքի Անդամ պետությունների ինքնիշխանության և իրավասության ներքո գտնվող ծովային տարածքներում թույլատրվում է ձկնորսական այն նավերին, որոնց վրա ծածանվում է Համայնքի Անդամ պետության դրոշը, և որը գրանցված է Համայնքի տարածքում, եթե այլ բան նախատեսված չէ:

Անշարժ գույքի գնում

Մի շարք Անդամ պետություններում ոչ Համայնքի ընկերությունների կողմից անշարժ գույքի գնումը ենթակա է սահմանափակումների:

Տեսաձայնային ծառայություններ, ներառյալ ռադիոն

Ազգային ռեժիմը, որը վերաբերում է տեսաձայնային ծառայությունների արտադրությանը և բաշխմանը, ներառյալ ռադիոհաղորդումներին և զանգավածային լրատվության այլ ձևերին, կարող է սահմանափակվել տեսաձայնային արտադրանքով, որոնք բավարարում են որոշակի սկզբնաղբյուրային չափանիշների:

Հեռահաղորդակցությունների ծառայություններ, ներառյալ շարժական և արբանյակային ծառայությունները

Վերապահման ենթակա ծառայություններ

Մի շարք Անդամ պետություններում մուտքը շուկա՝ օժանդակ ծառայությունների և ինֆրակառուցվածքի առումով, սահմանափակ է:

Մասնագիտական ծառայություններ

Ծառայությունների մատուցումը հնարավոր է Անդամ պետությունների քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձանց կողմից: Որոշակի պայմաններում այդ անձինք կարող են ստեղծել ընկերություններ:

Գյուղատնտեսություն

Մի շարք Անդամ պետություններում ազգային ռեժիմ չի կիրառվում գյուղատնտեսությունում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող այն ընկերությունների նկատմամբ, որոնք չեն վերահսկվում Համայնքի կողմից: Համայնքի

ընկերությունների կողմից չվերահսկվող ընկերությունների կողմից խաղողի այգիների ձեռքբերման մասին պետք է ծանուցվի, իսկ անհրաժեշտության դեպքում այն պետք է թույլատրվի:

Նորությունների գործակալության ծառայություններ

Մի շարք Անդամ պետություններում սահմանափակվում է արտասահմանյան մասնակցությունը հրատարակչական ընկերությունների և ռադիոհաղորդումների ընկերությունների աշխատանքներին:

Արձանագրություն վարչական մարմինների միջև մաքսային հարցերով փոխօգնության վերաբերյալ

Հոդված 1  
Սահմանումներ

Սույն Արձանագրության նպատակների համար՝

ա) «մաքսային օրենսդրություն» նշանակում է Կողմերի տարածքներում կիրառվող ցանկացած օրենսդրական կամ կարգավորող դրույթներ, որոնցով կարգավորվում են ապրանքների ներմուծումը, արտահանումը, տարանցումը և դրանց նկատմամբ որևէ մաքսային ընթացակարգի, ներառյալ արգելման, սահմանափակման և վերահսկողության միջոցառումների կիրառումը,

բ) «հայցող մարմին» նշանակում է իրավասու վարչական մարմին, որին այդ նպատակի համար նշանակում է Կողմը, և որը մաքսային հարցերում օգնություն է խնդրում,

գ) «հայցվող մարմին» նշանակում է իրավասու վարչական մարմին, որին այդ նպատակի համար նշանակում է Կողմը, և որը մաքսային հարցերում օգնության խնդրանքն է ստանում,

դ) «անձնական տվյալներ» նշանակում է այն ողջ տեղեկատվությունը, որը վերաբերում է ինքնությունը հաստատված կամ ինքնությունը հաստատվող անձին:

Հոդված 2  
Գործողության ոլորտը

1. Կողմերն իրենց իրավասության ոլորտներում պետք է աջակցեն միմյանց այն ձևով և այն պայմաններով, որոնք ամրագրված են սույն Արձանագրության մեջ, մաքսային օրենսդրությունը խախտող գործառնությունները կանխելու, բացահայտելու և քննելու հարցերում:

2. Մաքսային հարցերով օգնությունը, ինչպես ամրագրված է սույն Արձանագրության մեջ, կվերաբերի Կողմերի յուրաքանչյուր վարչական մարմնի, որն իրավասու է կիրարկելու սույն Արձանագրությունը: Այն չպետք է հակասի քրեական հարցերով փոխադարձ օգնությունը կարգավորող նորմերին, ինչպես նաև չպետք է թաքցնի տեղեկատվությունը դատական մարմինների իրավասության շրջանակներում կատարված հարցման արդյունքում ձեռք բերված փաստաթղթերը, եթե միայն այդ մարմինները չեն առարկի:

Հոդված 3  
Օգնություն ըստ խնդրանքի

1. Հայցող մարմնի խնդրանքով՝ հայցվող մարմինը պետք է առաջինին ապահովի այն ամբողջ տեղեկությամբ, որը նրան հնարավորություն կտա ճիշտ կիրառելու մաքսային օրենսդրությունը, ներառյալ պլանավորված կամ հայտնաբերված այն գործառնությունների վերաբերյալ տեղեկությունը, որոնք խախտում են կամ կարող են խախտել այդպիսի օրենսդրությունը:

2. Հայցող մարմնի պահանջով հայցվող մարմինը պետք է առաջինին տեղեկացնի այն մասին, թե արդյոք Կողմերից մեկի տարածքից արտահանված ապրանքները համապատասխան կարգով ներմուծվել են մյուս Կողմի տարածք, անհրաժեշտության դեպքում նշելով այն մաքսային ընթացակարգերը, որոնք կիրառվել են նշված ապրանքների նկատմամբ:

3. Հայցող մարմնի խնդրանքով՝ հայցվող մարմինը իր օրենքների շրջանակներում կձեռնարկի անհրաժեշտ քայլեր, հատուկ ուշադրություն ապահովելու համար՝

ա) այն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ, որոնց վերաբերյալ հիմնավոր կասկածներ կան առ այն, որ նրանք թույլ են տվել կամ թույլ են տալիս մաքսային օրենսդրության խախտում,

բ) այն պահեստային տարածքների նկատմամբ, որտեղ պահվում են ապրանքները և որոնց կապակցությամբ հիմնավոր կասկածներ կան առ այն, որ դրանք նախատեսված են մաքսային օրենսդրությունը խախտող գործառնություններ կատարելու համար,

գ) ապրանքների այն շարժին, որը կարող է առաջացնել մաքսային օրենսդրության խախտում,

դ) այն փոխադրամիջոցներին, որոնց նկատմամբ կան հիմնավոր կասկածներ առ այն, որ դրանք օգտագործվել են, օգտագործվում են կամ կարող էին օգտագործվել մաքսային օրենսդրությունը խախտող գործառնություններում:

#### Հոդված 4

#### Կամավոր օգնություն

Կողմերն, իրենց օրենքների, կանոնների և այլ իրավական միջոցների համապատասխան, միմյանց օգնություն ցույց կտան առանց նախնական դիմումի, եթե նրանք որոշեն, որ այն անհրաժեշտ է մաքսային օրենսդրության ճիշտ կիրառման համար, մասնավորապես, երբ նրանք ստանում են տեղեկություն, որը վերաբերում է՝

- գործողություններին, որոնք կատարվում են կամ ենթադրվում է, որ կատարվում են նման օրենսդրության խախտմամբ,

- նման գործողությունների կատարման համար կիրառվող նոր միջոցների կամ մեթոդների,

- այն ապրանքների, որոնք հանդիսանում են մաքսային օրենսդրության խախտման առարկա,

- այն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, որոնց վերաբերյալ հիմնավոր կասկածներ կան առ այն, որ նրանք թույլ են տվել կամ թույլ են տալիս մաքսային օրենսդրության խախտումներ,

- այն փոխադրամիջոցներին, որոնց նկատմամբ կան հիմնավոր կասկածներ առ այն, որ դրանք օգտագործվել են, օգտագործվում են կամ կարող էին օգտագործվել մաքսային օրենսդրությունը խախտող գործառնություններում:

#### Հոդված 5 Առաքում/Ծանուցում

Հայցող մարմնի խնդրանքով՝ հայցվող մարմինը համաձայն իր օրենսդրության կձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի՝

- առաքի բոլոր փաստաթղթերը,
- ծանուցի բոլոր որոշումների մասին,

սույն Արձանագրության շրջանակներում հասցեատիրոջը, որը գտնվում է կամ հիմնադրվել է իր տարածքում: Նման դեպքերում 6-րդ հոդվածի 3-րդ կետում կկիրառվի այնքանով, որքանով խնդրանքը առնչվում է դրան:

#### Հոդված 6 Օգնության համար ներկայացվող խնդրանքների ձևը և բովանդակությունը

1. Սույն Արձանագրությունում նշված խնդրանքները պետք է ներկայացվեն գրավոր: Դրանց կից պետք է ներկայացվեն բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են հայցի բավարարումն ապահովելու համար: Երբեմն, ելնելով իրավիճակի հրատապությունից, կարող են ընդունվել բանավոր խնդրանքներ, որոնք պետք է անհապաղ հաստատվեն գրավոր:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված հայցերը պետք է պարունակեն հետևյալ տեղեկությունը՝

- ա) հայցով դիմող մարմնի անվանումը,
- բ) հայցվող միջոցառումը,
- գ) հայցի առարկան և պատճառները,
- դ) հայցին առնչվող օրենքները, կանոնները և այլ օրենսդրական տարրերը,

ե) հնարավորին չափ ստույգ և լիարժեք տվյալներ այն իրավաբանական և ֆիզիկական անձանց վերաբերյալ, որոնք ընդգրկված են քննության մեջ,

զ) գործին առնչվող փաստերի և արդեն կատարված հարցումների համառոտագրությունը, բացառությամբ 5-րդ հոդվածում նշված դեպքերի:

3. Հայցերը պետք է ներկայացվեն հայցվող մարմնի պետական լեզվով կամ այդ մարմնի համար ընդունելի լեզվով:

4. Եթե հայցը չի բավարարում ձևական պահանջներին, ապա կարող է պահանջվել դրա ուղղումը կամ լրացումը, այնուամենայնիվ, կարող են թելադրվել նախագրուչական միջոցառումներ:

## Հոդված 7 Հայցերի կատարումը

1. Որպեսզի կատարվի օգնության համար ներկայացված հայցը, հայցվող մարմինը, իր իրավասության և իր տրամադրության տակ եղած միջոցների սահմաններում, կգործի իր անունից կամ տվյալ Կողմի այլ վարչական մարմինների խնդրանքով՝ մատակարարելով իր տրամադրության տակ եղած տեղեկությունը, կատարելով անհրաժեշտ հարցումներ կամ կազմակերպելով այդ հարցումների կատարումը ուրիշների միջոցով: Սույն դրույթը կկիրառվի նաև այն վարչական մարմնի նկատմամբ, որին հայցվող մարմինն ուղարկում է խնդրանքը, եթե վերջինս չի կարող հանդես գալ իր անունից:

2. Օգնության համար ներկայացվող խնդրանքները կբավարարվեն հայցվող Կողմի օրենքների, կանոնների և այլ օրենսդրական ակտերի համաձայն:

3. Մի Կողմի պատշաճ ձևով լիազորված պաշտոնական անձինք մյուս Կողմի համաձայնությամբ և, ենթարկվելով վերջինիս սահմանված պայմաններին, հայցվող մարմնի կամ այլ մարմնի գրասենյակներից, որոնց համար պատասխանատու է հայցվող մարմինը, կարող են ձեռք բերել տեղեկություն այն գործառնությունների վերաբերյալ, որոնք հանդիսանում են կամ կարող են հանդիսանալ մաքսային օրենսդրության խախտում, որից օգտվում է հայցող մարմինը՝ սույն Արձանագրության նպատակների համար:

4. Մի Կողմի պաշտոնատար անձինք մյուս Կողմի համաձայնությամբ, ենթարկվելով վերջինիս ներկայացրած պայմաններին, կարող են ներկա գտնվել վերջինիս տարածքում խնդրանքների կատարմանը:

## Հոդված 8 Տեղեկությունը հաղորդելու ձևը

1. Հայցվող մարմինը պետք է հարցումների արդյունքները հաղորդի հայցող մարմնին՝ փաստաթղթերի, դրանց վավերական պատճենների, հաշվետվությունների և այլ ձևերով:

2. 1-ին կետում նշված փաստաթղթերը կարող են փոխարինվել համակարգչային տեղեկատվությամբ, որը տրամադրվում է ցանկացած ձևով՝ նույն նպատակների համար:

#### Հոդված 9

Բացառություններ օգնություն տրամադրելու պարտավորությունից

1. Կողմերը կարող են հրաժարվել սույն Արձանագրությունում նշված կարգով օգնություն տրամադրելուց, երբ այդ օգնության տրամադրումը.

ա) կվնասի Հայաստանի Հանրապետության կամ որևէ Անդամ պետության ինքնիշխանությանը, որին դիմել են սույն Արձանագրության համաձայն օգնություն տրամադրելու վերաբերյալ խնդրանքով, կամ

բ) կհակասի պետական քաղաքականությանը, անվտանգությանը և այլ կարևոր շահերին, մասնավորապես, 10-րդ հոդվածի 2-րդ կետում նշված դեպքերում, կամ

գ) կընդգրկի դրամական կամ հարկային կանոնները այլ, քան մաքսային տուրքերի վերաբերյալ օրենսդրությունը, կամ

դ) կբացի արդյունաբերական, առևտրային կամ մասնագիտական գաղտնիք:

2. Եթե հայցող մարմինը խնդրում է այնպիսի օգնություն, որն ինքը չէր կարող տրամադրել իրենից խնդրելու դեպքում, ապա նա իր խնդրանքում պետք է հատուկ ուշադրություն դարձնի այդ փաստին: Այդ դեպքում հայցվող մարմնին իրավունք է վերապահվում որոշել, թե ինչպես պատասխանել տվյալ խնդրանքին:

3. Եթե օգնությունը մերժվում է, ապա հայցող մարմինն անհապաղ պետք է ծանուցվի մերժման և դրա պատճառների մասին:

#### Հոդված 10

Տեղեկության փոխանակում և դրա գաղտնիությունը

1. Սույն Արձանագրության հիման վրա որևէ ձևով հաղորդված տեղեկությունը պետք է լինի գաղտնի կամ սահմանափակ՝ կախված յուրաքանչյուր Կողմում գործող նորմերից: Դրա վրա կտարածվի պաշտոնական գաղտնիության պարտավորությունը, և այն պետք է պաշտպանվի այնպես, ինչպես որ կպաշտպանվեր այն ստացող Կողմի՝ այդպիսի տեղեկությունը՝ համաձայն այդ Կողմի օրենսդրության և Համայնքի հաստատությունների նկատմամբ կիրառվող համապատասխան օրենսդրության:



2. Անձնական տվյալները կարող են փոխանակվել, եթե միայն ստացող Կողմը ստանձնում է այդ տվյալների պաշտպանությունը առնվազն այն ճանապարհով, որը կիրառելի է տվյալներ տրամադրող Կողմի տարածքում՝ մասնավոր դեպքի համար:

3. Ձեռք բերված տեղեկությունը պետք է օգտագործվի միայն սույն Արձանագրության նպատակների համար: Եթե Կողմերից մեկը մտադիր է օգտագործել նման տեղեկությունը այլ նպատակների համար, այն պետք է խնդրի նախնական գրավոր համաձայնություն այն մարմնից, որը տրամադրել էր այդ տեղեկությունը: Ավելին, այն կենթարկվի այդ մարմնի կողմից մտցված ցանկացած սահմանափակման:

4. 3-րդ կետը չպետք է խոչընդոտի տեղեկության օգտագործումը որևէ դատական կամ վարչական ընթացակարգերում, որոնք հետագայում սկսվում են մաքսային օրենսդրությունը խախտելու դեպքում: Այն իրավասու մարմինը, որից ստացվել է տվյալ տեղեկությունը, կտեղեկացվի այդպիսի օգտագործման մասին:

5. Կողմերը ապացույցների վերաբերյալ փաստաթղթերում, զեկույցներում, վկայություններում, դատարանների ընթացակարգերում և մեղադրանքներում կարող են որպես ապացույց օգտագործել ստացված տեղեկությունը և սույն Արձանագրության դրույթների համաձայն օգտագործված փաստաթղթերը:

#### Հոդված 11

#### Փորձագետներ և վկաներ

1. Հայցվող մարմնի պաշտոնատար անձը կարող է լիազորվել, իրեն տրված լիազորության սահմաններում, հանդես գալ որպես փորձագետ կամ վկա դատական կամ վարչական այն ընթացակարգերում, որոնք վերաբերում են սույն Արձանագրությամբ մյուս Կողմի իրավասության ներքո գտնվող հարցերին, և այդ կապակցությամբ ներկայացնել այնպիսի նյութեր, փաստաթղթեր կամ դրանց հաստատված պատճենները, որոնք անհրաժեշտ կլինեն ընթացակարգերի ժամանակ: Վերոհիշյալ կարգավիճակով ներկայանալու ծանուցագրում պետք է հատկապես նշվի, թե ինչ գործով է հարցվելու անձը, ինչ պաշտոնով ու որակավորմամբ է նա հարցաքննվելու:

2. Լիազորված պաշտոնատար անձը պետք է ապահովվի այն պաշտպանվածությամբ, որը երաշխավորվում է հայցող մարմնի պաշտոնական անձանց համար իր տարածքում գործող օրենսդրությամբ:

#### Հոդված 12

## Օգնության հետ կապված ծախսերը

Կողմերը հրաժարվում են սույն Արձանագրության համաձայն կատարված ծախսերի փոխհատուցման վերաբերյալ միմյանց նկատմամբ եղած բոլոր բողոքներից, բացի այն ծախսերից, որոնք անհրաժեշտության դեպքում, կատարվում են փորձագետների, վկաների, թարգմանիչների համար, որոնք չեն հանդիսանում պետական ծառայողներ:

### Հոդված 13 Կիրառում

1. Սույն Արձանագրության կիրառումը պետք է վստահվի՝ մի կողմից, Հայաստանի Հանրապետության կենտրոնական մաքսային մարմիններին և, մյուս կողմից, Եվրոպական համայնքների հանձնաժողովի իրավասու ծառայություններին և, անհրաժեշտության դեպքում, Անդամ պետությունների մաքսային մարմիններին: Նրանք կորոշեն Արձանագրության կիրառման համար անհրաժեշտ բոլոր միջոցները ու միջոցառումները՝ հաշվի առնելով տվյալների պաշտպանության բնագավառում գործող կանոնները: Նրանք իրավասու մարմիններին կհանձնարարեն սույն Արձանագրությունում կատարել այն բոլոր փոփոխությունները, որոնք իրենք անհրաժեշտ կհամարեն:

2. Կողմերը կխորհրդակցեն միմյանց հետ և հետագայում համապատասխանաբար միմյանց կտեղեկացնեն իրականացման կանոնների մանրամասների մասին, որոնք ընդունվում են սույն Արձանագրության դրույթներին համապատասխան:

### Հոդված 14 Լրացում

Առանց հակասելու 10-րդ հոդվածի դրույթներին՝ փոխադարձ օգնության մասին համաձայնագրերը, որոնք կնքվել են մեկ կամ ավելի Անդամ պետությունների և Հայաստանի Հանրապետության միջև, չպետք է հակասեն Համայնքի այն դրույթներին, որոնցով կարգավորվում է Եվրոպական համայնքների Հանձնաժողովի իրավասու ծառայությունների և Անդամ պետությունների մաքսային մարմինների միջև մաքսային հարցերի վերաբերյալ ձեռք բերված որևէ տեղեկության հաղորդումը՝ ելնելով Համայնքի շահերից: